AZG NEW 1.QXD  7/28/2009  10:31 PM  Page 1

Ազգ
Azg
29 ՅՈՒԼԻՍ 2009 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 141 (4277)
ISSN: 1829-1651
9 771829 165003 09141

# Գլենդեյլում սպանվել է «Արարատ» բանկի գործադիր տնօրենի նախկին տեղակալը

Ըստ Panarmenian.net-ի, հուլիսի 22-ին Գլենդեյլում սպանվել է «Արարատ» բանկի գործադիր տնօրենի նախկին տեղակալ, 35-ամյա Արա Տերունյանը: Սպանությունը տեղի է ունեցել 11:08-ին, Արեւմտյան Կոլորադո փողոցում: Տերունյանն ու նրա կինը եղել են իրենց ավտոմեքենայում, երբ մարդասպանը մոտեցել է մեքենային ու կրակ է բացել նրա ուղղությամբ: Մինչ ոստիկանությունը կժամաներ դեպքի վայր, Արա Տերունյանն արդեն զոհվել էր: Asbarez.com-ը գրում է, որ Տերունյանը ղեկավար պաշտոն էր զբաղեցնում «Արարատ» բանկում: Ինչպես Panarmenian.net-ին է հաղորդել «Արարատ» բանկի մամլո քարտուղար **Արայիկ Մանուկյանը**, Արա Տերունյանն աշխատել է բանկում 6-7 տարի առաջ եւ զբաղեցրել է բանկի գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը: Այդ պաշտոնում նա աշխատել է ընդամենը 3-4 ամիս: Բացի այդ, Տերունյանն աշխատել է ՀՀ Կենտրոնական բանկում», նշել է Արայիկ Մանուկյանը:

# Թուրք հեղինակը առաջարկում է արարողության համար բացել Աղթամարի եկեղեցին

### *Այն հաշվարկով, որ առաջարկը ծառայի ՀՀ նախագահի այցին, իսկ այցը` Թուրքիայի շահերին*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Հուլիսի 17-ին «Թուրքիան նախապատրաստվում է Հայաստանի հետ ֆուտբոլային հանդիպմանը» վերնագրով «**Ազգը**» նշել էր, որ եթե դա անցկացվի Կեսարիայում, ապա քաղաքի վերանորոգված մարզադաշտը կբացվի այդ հանդիպումով: Քանի որ Հայաստանի եւ Թուրքիայի ազգային հավաքականների հոկտեմբերի 14-ին նշանակված պատասխան հանդիպումը տեղափոխվել է Բուրսա, մարզադաշտի բացումը կկատարվի սեպտեմբերի 5-ին, երբ թուրքերը կհյուրընկալեն էստոնացիներին:

Կարեւորը տվյալ դեպքում Կեսարիայի մարզադաշտը չէ, այլ Հայաստանի ազգային հավաքականի հետ պատասխան հանդիպման նախապատրաստությունները Թուրքիայում: Հանդիպումը իր թուրք պաշտոնակից Աբդուլլահ Գյուլի հետ դիտելու համար ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Թուրքիա կմեկնի՞, թե՞ ոչ, դժվար է կռահելը, պարզապես գիտենք, որ նա հրավերն արդեն ստացել է: Թեեւ դա հիմք չի տալիս ենթադրելու, որ նախագահ Սարգսյանի մեկնումը կնպաստի որեւէ հարցի լուծմանը Թուրքիայի հետ հարաբերություններում, սակայն նախագահ Գյուլն արձագանքել էր նրա հրավերին:

Հետեւաբար, որեւէ պատճառով չմեկնելու դեպքում ՀՀ նախագահը կհայտնվի դիվանագիտական քաղաքավարությունը խախտողի դերում: Դա առիթ կտա Թուրքիային, որ միջազգային ասպարեզում մերժումը շահարկի եւ մերժման արարքն ի լուր աշխարհի պայմանավորի «հայ-թուրքական երկխոսության, տարածաշրջանում խաղաղության եւ կայունության» նկատմամբ Հայաստանի «անհաշտ» դիրքորոշումով:

Ամենայն հավանականությամբ միջազգային ուժերը տուրք կտան թուրքական շահարկումներին եւ անկախության առաջին իսկ օրից Թուրքիայի թշնամության թիրախը դարձած Հայաստանն ինքը կստանձնի ընդգծված «հակաթուրքական» քաղաքականություն ծավալողի դերը: Ակնհայտ է, որ Թուրքիան ՀՀ նախագահի հյուրընկալությունը նույնպես ծառայեցնելու է սեփական շահերին, թե «բարեկամաբար է վերաբերվում Հայաստանին»:

*Տես էջ 3*

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ

# Հայաստանում է Սերբիայի նախագահ Բորիս Տադիչը



ՖՈՏՈԼՈՒՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Սերբ ժողովրդի հետ բարեկամական հարաբերությունների ու Ցեղասպանության, հատկապես 1922 թ. Իզմիրի ջարդերից փրկված հայերի հանդեպ Սերբիայի հոգատար վերաբերմունքի մասին շնորհակալական խոսքով երեկ Հայաստանի նախագահը ներկայացրեց իր գործընկերոջ` Սերբիայի նախագահի հետ մամուլի համար նախատեսված համատեղ հայտարարությունը:**

**Սերժ Սարգսյանի հրավերով երկօրյա պաշտոնական այցով Հայաստան այցելած Սերբիայի նախագահ Բորիս Տադիչի հետ առանձնազրույցից եւ պաշտոնական պատվիրակությունների ընդլայնված կազմով հանդիպումից հետո Հայաստանի նախագահը կարեւորեց, որ սերբ ժողովրդի հոգատարությունը հայ ժողովուրդը զգացել է նաեւ 1988 թ. երկրաշարժից հետո: Այդ ժամանակ մարդասիրական օգնություն տեղափոխելիս զոհվեցին սերբ օդաչուներ:**

**«Տարածաշրջանային հակամարտությունները պետք է կարգավորվեն առանց ուժի կիրառման, խաղաղ բանակցությունների ճանապարհով եւ միջազգային իրավունքի նորմերի հիման վրա», հայտարարեց Սերժ Սարգսյանը` ներկայացնելով երկու երկրների նախագահների քննարկումների արդյունքում դիրքորոշումների ընդհանրությունը: Սարգսյանի խոսքերով, չկան հակամարտությունների կարգավորման ունիվերսալ ձեւեր, կան առանձնահատկություններ, առանց որոնք հաշվի առնելու հնարավոր չէ գտնել լուծումներ:**

*Տես էջ 2*

# Հայաստանի անդամակցությունը միջազգային աստղագիտական միությանը վտանգի տակ է

Կանադահայ **Շահե Թանաշյանը** մեզ ուղարկած էլեկտրոնային նամակով մտահոգություն է հայտնել, որ 6 տարի անդամավճար չվճարելու պատճառով Հայաստանը կանգնած է միջազգային աստղագիտական միության անդամակցությունից զրկվելու վտանգի առջեւ: Հայաստանն այդ միությանն անդամակցել է դեռեւս Վիկտոր Համբարձումյանի կենդանության օրերից, նրա շնորհիվ մեծ հեղինակություն վայելել, որը հաշվի առնելով միությունը վերջին տարիներին խիստ միջոցներ չի կիրառել, հույս ունենալով, որ ժամանակի ընթացքում խնդիրը կլուծվի: Ի դեպ, յուրաքանչյուր տարվա համար Հայաստանը պարտավոր է վճարել 3500 կանադական դոլար: Շահե Թանաշյանը գրում է, որ ինքը որպես նշյալ միության անդամ այդ մասին անցած տարի խոսել է ՀԲԸՄ հայագիտական դասընթացների ժամանակ: Իսկ այս տարվա հունիսին Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանից ստացել է միությունից ուղարկված վերջին նախազգուշական նամակը, որ եթե մինչեւ հուլիսի 31-ը վճարումը չկատարվի, Հայաստանը վերջնականապես կզրկվի անդամակցությունից:

Նկատի առնելով Հայաստանի տնտեսական վիճակը, Թանաշյանն առաջարկում է այդ գումարը վճարել ՀԲԸՄ կանադական բաժանմունքի օգնությամբ եւ դիմում է բոլոր նրանց, ովքեր կարող են նվիրատվություն կատարել եւ Հայաստանին դուրս բերել այս կացությունից: Ցանկացողները կարող են դիմել chahet@videotron.ca հասցեով:

**Ռ. Պ.**

# Զարուհի Փոստանջյանն ընդդեմ «Ազատամտություն» օրաթերթի

**«Ժառանգություն» խմբակցության անդամ Զարուհի Փոստանջյանի դիմումի հիման վրա քրեական գործ է հարուցվել «Ազատամտություն» օրաթերթի դեմ քրեական օրենսգրքի 136 հոդվածի առաջին մասով («Վիրավորանք»): Այս մասին «Նոյյան տապանին» հայտնեցին ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունից: Հիշեցնենք, որ պատգամավորը դիմել էր իրավապահ մարմիններին օրաթերթի դեմ քրեական գործ հարուցելու խնդրանքով` իր անձն ու արժանապատվությունը վիրավորող եւ զրպարտող տեղեկություններ տարածելու համար:**

# Նոր անդամներ Կոնվերս բանկում

Կոնվերս բանկը հայտնել է խորհրդի կազմում` Նյու Յորքից ժամանած երկու կարեւոր անդամների նշանակման մասին:

**Ջոն Տոնելին** եւ **Ռոբերտ Սեդրակյանը** կստանձնեն իրենց պաշտոնները Կենտրոնական բանկի կողմից իրենց նշանակման հաստատումից անմիջապես հետո:.

Ջոն Տոնելին Նյու Յորքի ՋեյՓի Մորգան Չեյզ Բանկի ավագ բանկիր է եւ միջազգային ծրագրերի ֆինանսավորման բաժնի ղեկավարը, ունի միջազգային ֆինանսական ոլորտում ավելի քան 20 տարվա փորձ: Մինչ ՋեյՓի Մորգան Չեյզում աշխատելը նա Բեյր Ստիերս ընդ Կո-ի Ավագ գործադիր տնօրենն էր եւ ձեւավորվող շուկաների կառուցվածքային ֆինանսավորման բաժնի ղեկավարը: Դրանից առաջ նա եղել է Նյու Յորքում գտնվող խոշոր Ուոլ Սթրիթի իրավաբանական ընկերության` Կադվալադեր Վիկերշեմ ընդ Թաֆտի իրավաբան:

Պարոն Տոնելին բակալավրի կոչում է ստացել Կոլումբիայի համալսարանում, իսկ իրավաբանական կրթությունը ստացել եւ մագիստրատուրան ավարտել է Ֆորդհամի համալսարանում: Ռոբերտ Սեդրակյանը Հելիոս Գրուպի` Նյու Յորքում գտնվող մասնավոր ներդրումային ընկերության գործադիր տնօրենն է: Մինչ Հելիոս Գրուպի կազմավորումը պրն. Սեդրակյանը եղել է Սանբիմ Օսթեր ընկերության գլխավոր ֆինանսական ղեկավարը: Սանբիմ Օսթերը սպառողական ապրանքների միջազգային ընկերություն է, որն ընդգրկված է «Ֆորթյուն» ամսագրի 500 ընկերությունների թվում:

*Տես էջ 2*

# «Ազգի» հարցազրույցը Լիբանանի խորհրդարանի նախկին պատգամավոր Հակոբ Գասարճյանի հետ

***Վերջերս Երեւանում էր Լիբանանի խորհրդարանի նախկին պատգամավոր, ՌԱԿ Կենտրոնական վարչության նախկին ատենապետ, ՌԱԿ Լիբանանի շրջանակի ղեկավարներից, Թեքեյան մշակութային միության Հիմնադիրների մարմնի փոխատենապետ, վերջերս լիբանանյան «Կրեդիս» եւ հայաստանյան «Անելիք» բանկերի միջեւ կայացած կապիտալիզացիայի արդյունքում «Անելիք» բանկի խորհրդի նախագահ ընտրված գործարար Հակոբ Գասարճյանը: Օգտվելով առիթից, «Ազգը» հարցազրույց ունեցավ նրա հետ:***

**- Գործարարության կողքին, դուք երկար տարիներ զբաղվել եք նաեւ քաղաքականությամբ` լիբանանյան տեղական թե հայկական մակարդակներում, որպես Լիբանանի խորհրդարանի պատգամավոր ու ՌԱԿ Կենտրոնական վարչության նախկին ատենապետ ու կուսակցության Լիբանանի շրջանակի ղեկավար: Ի՞նչ կասեք լիբանանյան վերջին խորհրդարանական ընտրությունների մասին, որոնք շատերի բնորոշմամբ աննախադեպ էին ու աղմկոտ:**

- Նախքան վերջին խորհրդարանական ընտրություններուն անդրադառնալը, կուզեմ խոսիլ լիբանանյան քաղաքական կյանքին մեջ հայկական մասնակցության մասին: Ինչպես ծանոթ է շատերուն, մինչեւ 2000 թ. լիբանանյան քաղաքական կյանքին մեջ հայ համայնքը ամբողջությամբ կներկայացվեր ՀՅԴ-ի կողմե: 2000 թ., նահատակ վարչապետ Ռաֆիկ Հարիրիի օրոք, փոփոխություն տեղի ունեցավ գոյություն ունեցող կացության մեջ:



Վարչապետ Հարիրի որդեգրեց հայության ներկայացուցչության մեջ զանազանություն ապահովող քաղաքականություն մը: Այս քաղաքականության շնորհիվ է, որ առիթ տրվեցավ հայ ավանդական մյուս երկու կուսակցություններուն` ՌԱԿ-ին եւ ՍԴՀԿ-ին, նույնպես մասնակցելու խորհրդարանական ընտրություններուն, որով այդ թվականեն երեք կուսակցություններն ալ տեղ գրավեցին խորհրդարանին մեջ: Այսպիսով, վերացավ «Հայկական բլոկ» հասկացությունը, հակառակ անոր, որ Դաշնակցությունը իր երկու երեսփոխաններով կշարունակեր պնդել, որ ինք տակավին կներկայացնե «Հայկական բլոկը»: Նույն վիճակը շարունակվեցավ նաեւ 2005 թ. խորհրդարանական ընտրություններուն:

Գալով 2009 թ. ընտրություններուն, պետք է ըսել, որ մինչ այդ ընտրությունները որոշ փոփոխություններ տեղի ունեցած էին: Լիբանանյան քաղաքական զանազան կողմեր առարկություններ ունեին ընտրաշրջաններու բաժանման 2000 թ. օրենքին դեմ, զայն նկատելով ներկայացուցչություն ապահովելու տեսակետե անարդար օրենք մը: Դոհայի մեջ գոյացած միջլիբանանյան համաձայնության հիման վրա ետ դարձ կատարվեցավ, եւ ընտրաշրջաններու բաժանման 1960 թ. օրենքը որդեգրվեցավ:

*Տես էջ 4*

AZG NEW 2.QXD 7/28/2009 10:31 PM Page 1



# «Ղարաբաղը բանակցություններում վստահում է Սերժ Սարգսյանին»




Հանրային խորհրդի անդամներին Ղարաբաղում հետաքրքրել է ամեն ինչ՝ կյանքի պայմանները, հասարակության տրամադրությունը եւ այլն: Բայց բոլոր հանդիպումների առանցքային թեման ղարաբաղյան հակամարտության կարգավորման ընթացքն ու Մադրիդյան սկզբունքների քննարկումն են եղել:

«Մենք նկատեցինք, որ Ղարաբաղյան իշխանության ներկայացուցիչները բանակցություններում աներկբա վստահում են Սերժ Սարգսյանին: Սա շատ կարեւոր հանգամանք է: Վստահել Սերժ Սարգսյանին եւ դառնալ բանակցային կողմ՝ մեկը մյուսին չի հակասում: Ես կասեի, գուցե մեկը մյուսին լրացնում է», երեկ «Փաստարկ» ակումբում իր տպավորությունները փոխանցեց լրագրողներին **Խոսրով Հարությունյանը**:

Ըստ նրա՝ Ղարաբաղի շարքային քաղաքացիները նույնպես հանգիստ են. «Ղարաբաղցիները ապրում են շատ հանգիստ, շատ առողջ, շատ արարող եւ ստեղծագործ կյանքով, որտեղ մենք եղել ենք, դա ենք նկատել: Գյուղատնտեսությունում մարդը հողն է մշակում, շինարարություն է գնում, խոսում են նոր ջրագծերի վերականգնման, ջրային ռեսուրսների կարգավորման մասին: Այսինքն՝ այն, ինչ բնորոշ է երկարաժամկետ, խաղաղ պայմաններում ապրելու պատրաստվող հասարակությանը»:

Ինչ վերաբերում է մադրիդյան սկզբունքներին, բանախոսը, համեմատելով մինչ այդ առկա բոլոր փաստաթղթերի հետ, ասաց, որ այս փաստաթուղթը որակական տեղաշարժ է դեպի հակամարտության արդարացի լուծում: «Անկասկած, կան նաեւ մտահոգություններ, որոնք անհիմն չեն: Մտահոգությունները ոչ թե ուղղված են մերժելու փաստաթուղթը, այլ հավելյալ բանակցելու, ճշգրտումներ մտցնելու», ասաց Խ. Հարությունյանն ու հավելեց, որ փաստաթուղթը վերանայելու, հատկապես անվտանգության տեսանկյունից ավելի լրջագույն փաստարկներ, հակակշիռներ ներկայացնելու անհրաժեշտություն կա:

Այն հարցին, թե հնարավո՞ր է, որ Ադրբեջանը դիմի ռազմական գործողությունների, նա պատասխանեց. «Դժվար է կանխատեսել, թե ինչպիսի քաղաքական որոշումներ կարող է կայացնել ադրբեջանական ղեկավարությունը: Քաղաքական ողջամտությունը հուշում է, որ ռազմական գործողություններ սկսելն ամենակործանարար որոշումը կլինի»: Ըստ նրա, ինչպես Հայաստանի իշխանություններին, այնպես էլ միջազգային հանրությանը պետք է մտահոգի այն փաստը, որ եթե նախկինում Ադրբեջանը միայն երկրի ներսում էր հայտարարում ռազմական գործողությունների մասին, ապա Իլհամ Ալիեւը նման հայտարարություն արել է նաեւ Լոնդոնում. «Դա նոր իրավիճակ է, որը պետք է մտահոգի հայկական կողմին: Ինձ մտահոգում է այն, որ այդ փաստը չանհանգստացրեց միջազգային հանրությանը, քանի որ Ադրբեջանը կոնֆլիկտը անթաքույց ռազմական ճանապարհով լուծելու մտադրություն է հայտնել»: Խ. Հարությունյանը նշեց, որ Ադրբեջանը ԱՊՀ երկրների շարքում (բացի Ռուսաստանից) ռազմական, սպառազինության ամենաբարձր մակարդակն ունի:

Խ. Հարությունյանը նշեց, թե համանախագահողները չեն ցանկանում, որ ԼՂՀ-ն բանակցային կողմ դառնա, քանի որ նրանք ավելի կոշտ դիրքորոշում ունեն: Նա միաժամանակ հավելեց, որ թեեւ ԼՂՀ-ն բանակցություններին ուղղակի չի մասնակցում, բայց բանակցող կողմերը ինչ փաստաթուղթ էլ ընդունեն, չեն կարող կյանքի կոչել, եթե չստանան Ղարաբաղի համաձայնությունը:

Խոսրով Հարությունյանը այլ է կերպ է պատկերացնում բանակցային կողմ դառնալու Ղարաբաղի պահանջը: «Երբեւէ Ղարաբաղը դե ֆակտո բանակցային գործընթացից դուրս չի եղել: Երբ եղել են ինչ-որ պայմանավորվածություններ, ե՛ւ ամերիկացիներն են իմացել, ե՛ւ ռուսներն են իմացել, ե՛ւ ադրբեջանցիներն են իմացել, ե՛ւ Արեւմտյան Եվրոպան, որ այդ փաստաթուղթը ուղղակի-անուղղակի համաձայնեցվում է ղարաբաղյան իշխանությունների հետ: Ով էր դա անում՝ մի դեպքում դա անում էր բանակցող նախագահը, մյուս դեպքում անում էին ՄԽ համանախագահողները: Բանակցային գործընթացին մասնակից դառնալը, այնպես, ինչպես մենք ենք պատկերացնում, որ բանակցությունները տեղի ունենան միաժամանակ երեք կողմի միջեւ, ես կարծում եմ, օգտակար կլիներ որոշումները կազմակերպելու կամ որոշում ստանալու համար, բայց մեթոդոլոգիայի առումով դա անհամեմատելի բարդացումներ է ստեղծում»:

Ն. Ս.

# Հայաստանում է Սերբիայի նախագահ Բորիս Տադիչը

*1-ին էջից*

Բորիս Տադիչի հետ հայ-թուրքական հարաբերությունների քննարկման համատեքստում Հայաստանի նախագահը ընդգծեց, որ ֆուտբոլային սպասվող խաղին մասնակցության հրավեր ունի Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլից:

«Ներկա իրողությունների պայմաններում ակնկալում ենք ականատես լինել կառուցողական քայլերի՝ Թուրքիա Հայաստանի նախագահի այցի համար համապատասխան միջավայր ապահովելու առումով», նշեց Սարգսյանը: Հայաստանի նախագահը ընդգծեց. «Թուրքիա կմեկնեմ, եթե արդեն իսկ ունենանք բաց սահման կամ լինենք Հայաստանի շրջափակման վերացման որոշակի նախաշեմին»:

Սերբիայի նախագահն իր հերթին հիշատակեց երկու ժողովուրդների ընդհանրությունների մասին, ավելացնելով, որ այդ ամենի վկայությունը նաեւ հայ մշակույթի առկայությունն է Սերբիայում ոչ միայն հուշարձանների տեսքով, այլեւ մարդկանց: Բորիս Տադիչը հիշատակեց հայտնի կոմպոզիտոր Վարդգես Բարոյանին, բալետի պարուհի Աշխեն Աթարյանցին եւ այլոց:

Անդրադառնալով համաշխարհային ֆինանսական ճգնաժամին՝ Տադիչն ընդգծեց, որ այդ պայմաններում պետք է ոչ միայն դիմագրավել մարտահրավերներին, այլեւ դա անել փոխօգնության միջոցով:

Սերբիայի նախագահը խոսեց նաեւ հակամարտությունների կարգավորումից, հարգանք արտահայտելով բանակցությունների այն ձեւի հանդեպ, որ որդեգրել են Հայաստանը Կովկասում, Սերբիան՝ Բալկաններում:

Սերբիայի նախագահը երեկ այցելեց Մեծ եղեռնի հուշահամալիր, եղավ Հայոց ցեղասպանության թանգարանում, ծառ տնկեց Հիշատակի պուրակում:

Բորիս Տադիչը հարգանքի տուրք կմատուցի եւ ծաղկեպսակ կդնի նաեւ 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո աղետյալ բնակչությանն օգնության շտապող ավիավթարից զոհված հարավսլավացի օդաչուների հուշարձանին:

Սերբիայի նախագահը կայցելի նաեւ Մատենադարան: Սերբիայի նախագահը պատասխան այցելությամբ Բելգրադում է սպասում Սերժ Սարգսյանին: «Անպայման չէ, որ առիթը ֆուտբոլը կամ մեկ այլ միջոցառում լինի: Թեեւ կարող է եւ այդ առիթով լինել, բայց մենք, հուսով եմ, կհաղթենք», ասաց Բորիս Տադիչը, նկատի ունենալով Սերբիա-Հայաստան 0:0 ավարտված խաղի պատասխանը:

# Նոր անդամներ Կոնվերս բանկում

*1-ին էջից*

Նա նաեւ գլխավոր գործընկեր է եղել Ջապոնիկա Փարթներսում, որը գնման եւ ներդրումների ակտիվ գործող ընկերություն է: Դրանից առաջ նա աշխատել է Կալիֆոռնիայի Ֆըրսթ Ինտերսթեյթ բանկի առեւտրային բանկային բաժնում: Պրն Սեդրակյանը բակալավրի կոչում է ստացել տնտեսագիտությունից եւ մագիստրոսի կոչում՝ ֆինանսական ոլորտում, ինչպես նաեւ միջազգային բիզնես է սովորել Հարավային Կալիֆոռնիայի համալսարանում:

Նշանակման մասին հայտնելիս բաժնետերերը նշել են. «Մեր բանկի համար առաջնային են վստահությունը, անխոցելիությունը եւ հաճախորդների սպասարկումը: Այդ պատճառով մենք մշտապես իրականացնում ենք ծրագրեր, որոնցով մենք ընկալվում ենք շուկայում որպես Հայաստանի առաջատար բանկերից մեկը, որն ունի անբասիր հեղինակություն: Ուոլ Սթրիթի երկու փորձառու մասնագետների նշանակումը որպես մեր բանկի խորհրդի անդամներ ավելի կբարելավի մեր ղեկավարության եւ աշխատակազմի պրոֆեսիոնալիզմի որակը եւ մակարդակը:

«Պարոն Ջոն Տոնելի եւ պրն Ռոբերտ Սեդրակյանի նշանակումը որպես Կոնվերս բանկի թիմի ավագ անդամներ նշանակալիորեն կավելացնի բանկի հնարավորությունները եւ կխթանի իր հաճախորդներին նոր առաջնակարգ ծառայությունների մատուցումը», ավելացրել են բաժնետերերը:

Այս նշանակումների մասին Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանը նկատել է, որ պրն Տոնելիի եւ պրն Սեդրակյանի նշանակումը դրական է Կոնվերս բանկի համար եւ օգտակար՝ Հայաստանի բանկային սեկտորին:

ՊԱՏԱՍԽԱՆ ՌԱՖՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

# «Ես երբեք չեմ հայհոյում, իսկ եթե հայհոյում եմ՝ միայն տղամարդավարի»

## *Ասում է Գալուստ Սահակյանը*

**«Ժառանգության» ղեկավար Րաֆֆի Հովհաննիսյանի բաց նամակում Հանրապետական կուսակցության խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը որակվում է «ստախոս, զրպարտիչ...»:**

**«Ազգը» ցանկացավ տեղեկանալ պրն Սահակյանի հակազդեցությունը, եւ ահա թե ինչ ասաց նա. «Ես երբեք չեմ հայհոյում, իսկ եթե հայհոյում եմ՝ միայն տղամարդավարի: Չեմ պատասխանում Ր. Հովհաննիսյանին, ներկայացնում եմ փաստերը:**

**1992-ի փետրվարի 28-ին ԵԱՀԿ ավագ պաշտոնյաների կոմիտեն բոլոր ԵԱՀԿ անդամ երկրների ներկայացուցիչների, այդ թվում՝ Հայաստանի ներկայացուցչի համաձայնությամբ (կոնսենսուսով) ընդունեց առաջին միջազգային փաստաթուղթը Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին: Այդ փաստաթղթում տեղ են գտել հետեւյալ ձեւակերպումները.**

**«Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի տարածք»:**

**«Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանություններ, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի տեղական իշխանություններ»:**

**«Հարգել բոլոր սահմանների անձեռնմխելիությունը, լինեն դրանք ներքին կամ արտաքին»:**

**Այդ ձեւակերպումները միանշանակ վկայում են, որ 1991-ի դեկտեմբերի 10-ի հանրաքվեով անկախացած, դրանից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրված պառլամենտի կողմից 1992-ի հունվարին աշխարհի բոլոր պետություններին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությանն իր անկախությունը ճանաչելու հայտարարությամբ դիմած ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ավագ պաշտոնյաների փաստաթղթով դիտարկվում էր որպես Ադրբեջանի տարածք, իսկ հարցի կարգավորումը՝ Լեռնային Ղարաբաղը պահպանելով-վերադարձնելով Ադրբեջանի կազմ:**

**1992-ի մարտի 14-ին ավագ պաշտոնյաների կոմիտեի նիստը կրկին բոլոր մասնակիցների, այդ թվում՝ Հայաստանի ներկայացուցչի համաձայնությամբ վերահաստատեց իր նախորդ՝ 1992-ի փետրվարի 28-ի որոշումը:**

**1992-ի մարտի 24-ին Հելսինկիում կայացավ ԵԱՀԿ նախարարական խորհրդի հանդիպումը, որտեղ Հայաստանը ներկայացնում էր արտաքին գործերի նախարար Րաֆֆի Հովհաննիսյանը: Հանդիպման արդյունքում կոնսենսուսով նախարարները եկան մի շարք եզրակացությունների, այդ թվում. «Նախարարները իրականացրին ԵԱՀԿ շրջանակներում ընթացիկ գործունեության դիտարկում եւ ամբողջապես հավանություն տվեցին ավագ պաշտոնյաների կոմիտեի ընդունած որոշումներին»:**

**Դրանով իսկ ՀՀ այն ժամանակվա արտգործնախարարը, ինչպես եւ իրեն ենթակա պաշտոնյան համաձայնել են, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում է եւ հարցի կարգավորումը ենթադրում է ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերադարձը Ադրբեջանի կազմ:**

**Այնուհետեւ պրն Սահակյանը նշելով այլ փաստեր, ամփոփում է, որ «1992 թվականի սկզբներին Ր. Հովհաննիսյանը եւ իր ղեկավարած արտաքին գործերի նախարարությունն ակտիվորեն իրականացնում էին «Ղարաբաղը Ադրբեջանի կազմում» Հայաստանի այն ժամանակվա իշխանությունների քաղաքականությունը»:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Սպառնալիքներ նորաստեղծ կրթական ծրագրի դեմ

**«Լույս» հիմնադրամի կրթական ծրագրի տնօրենությունը երեկ հայտարարություն է տարածել, որ աշխարհի լավագույն բուհերում սովորող հայ ուսանողներին աջակցելու աշխատանքները մոտենում են հանգուցալուծմանը եւ շուտով կհայտարարվեն այն ուսանողների անունները, ովքեր դառնալու են «Լույս» հիմնադրամի կրթական ծրագրի կրթաթոշակառուները:**

**Կան բազմաթիվ դժվարություններ, որոնցից մեկի մասին ցանկացել են բարձրաձայնել, նկատի առնելով դրա պատճառած ավելորդ գլխացավանքները: Հարցն այն է, որ Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի ուսանող Հայկ Իշխանյանն արդեն մի քանի անգամ ներխուժել է «Լույս» հիմնադրամի կրթական ծրագրի գրասենյակ, խանգարել աշխատանքը եւ սպառնացել աշխատակիցներին: «Հայկ Իշխանյանն այս ծրագրի հեղինակ հռչակած, այս գաղափարը շարունակաբար սեփականաշնորհել փորձող եւ հասարակական շանտաժի մեջ բավականին մեծ համբավ ձեռք բերած Արթուր Իշխանյանի որդին է: «Լույս» հիմնադրամի կրթական ծրագիրն իր աշխատանքներն սկսել է բավականին լուրջ բացասական PR-ի պայմաններում, որը կազմակերպվել էր Արթուր Իշխանյանի կողմից, հավանաբար այն պատճառով, որ նա դիմել էր «Լույս» հիմնադրամի կրթական ծրագրի տնօրենի պաշտոնի համար, եւ հանձնաժողովի միահամուռ որոշմամբ՝ ընտրվել էր մեկ այլ թեկնածու: Հիմնադրամի կրթական ծրագրի էլեկտրոնային հասցեով ստացվել են բազմաթիվ «սպամ» նամակներ, որոնք եւս բավականին խոչընդոտել են աշխատանքներին: «Չենք ուզում որեւէ մեկին կասկածի տակ առնել, բայց դատելով հոր եւ որդու քայլերից, ակամա մտածում ես, որ դա կարող է նրանց կողմից ուղղորդված լինել: «Լույս» հիմնադրամի կրթական ծրագիրը հայտարարում է, որ հետայսու դիմելու է բոլոր օրինական միջոցներին՝ իր գործունեության հանդեպ այսօրինակ ոտնձգությունները սահմանափակելու համար» կարդում ենք հաղորդագրության մեջ:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Թուրքը այդ հողի արժեքը չգիտի»

## Ղարաբաղցիները դեմ են տարածքները վերադարձնելուն

Վերջին օրերին շատերն են խոսում ղարաբաղյան հակամարտության ու տարածքների վերադարձի մասին: Քաղաքագետները քննարկում են, քաղաքական գործիչները վիճում, եվրոպացի դասախոսները լեկցիա կարդում, նախագահները մաս թափ տալիս, բոլորը խոսում են, վիճաբանում, սակայն երբեւէ չեն հարցնում ազատագրված տարածքներում բնակվող մարդկանց` ղարաբաղցիների կարծիքը:

1992-ի ձմռան ցուրտ երեկոներից էր: Արկերի ձայնը դարձել էր սովորական: Օրական հարյուրավոր զոհեր, նույնքան անհայտ կորածներ: Նրանց շարքում էր նաեւ 30-ամյա Տիգրանը: Պատմությունները բազմաթիվ են: Ոմանք ասում են, թե Ֆիզուլիի մարտերի ժամանակ է զոհվել, շատերն էլ պատմում են, որ Տիգրանն ու մարտական մի քանի ընկերներ վիրավորվել, գերի են ընկել, որտեղ նրանց հրկիզել են: Ցավոք, այս ենթադրություններից բացի, ոչ մի հավաստի փաստ չկա: Գրեթե բոլորն են հավատում այս պատմություններին, բոլորը, բացի Տիգրանի մայրիկից` տիկին Նադյայից: Անցել է ավելի քան 15 տարի, սակայն մայրը սպասում է որդու վերադարձին: Ասում է` սկզբում հավատն ավելի մեծ էր, հիմա նախկին խանդավառությամբ էլ չի սպասում:

«Գիտեմ, որ չի գալու, բայց էլի սպասում եմ: Մոր սիրտ է, տանջվում է... 94-ի զինադադարից հետո, երբ ամեն ինչ հանդարտվել էր, զարթնում էի այն հույսով, որ Տիգրանս կվերադառնա, բայց...

Նրա սիրելի կերակուրն էի պատրաստում` թփով տոլմա ու ժինգյալով հաց: Կերակուրը սառում էր, իսկ Տիգրանը չկար», ասում է նա:

Տիգրանի սենյակում ոչինչ չի փոխվել: Հատակին` մի քանի ծրար, սեղանին` գրքեր, թերթեր, լի մոխրամանը: Հագուստները` աթոռին, մահճակալին թափված: Տիկին Նադյան պատմում է, որ որդուն պատերազմ ուղարկելուց հետո սենյակում ոչինչ չի փոխել: «Էս սենյակից եմ որդուս կարոտը առնում, գերեզման էլ չունի, որ գնամ, լացեմ, մոտ վառեմ, խունկ ծխամ ու հոգիս հանգստանա», պատմում է տիկին Նադյան ու արցունքները հոսում են փոքրացած աչքերից:

«Ուրիշի ուրախությամբ էի ապրում: Լինում էին օրեր, որ հարեւանների կորած տղաները գալիս էին տուն, գերի էին ընկել, բայց կարողացել էին փախչել, որին էլ գումար էին տալիս, ազատում: Նրանց ընտանիքի հետ ուրախանում էի ու աղոթում, որ Աստված Տիգրանիս էլ վերադարձնի: Բայց չստացվեց...»:

Այժմ տիկին Նադյան ժամանակը տրամադրում է երկու փոքրիկ կատուներին, ծաղիկ աճեցնում, այգին խնամում, որպեսզի ձմռանը թոռներին համեղ մուրաբա հյուրասիրի: Մնացյալ ժամանակը տրամադրում է հեռուստատեսությանը` լուրեր, մեկնաբանություններ լսում: «Ասում են` ուզում են տարածքները վերադարձնել, չեմ հասկանում, ինչի՞ համար: Ինչի՞ համար եղավ պատերազմը, որ այժմ պետք է ազատագրված տարածքները վերադարձնենք: Ինչի՞ համար մեր տղաները զոհվեցին, որպեսզի հետո այն հողը, որի համար իմ որդին արյուն է թափել, հանձնենք թուրքին: Ախր թուրքը այդ հողի արժեքը չգիտի», ասում է տիկին Նադյան ու զայրանում անարդարության վրա, որ այնքան շատ է մեր կյանքում:

21-ամյա Նարեն մինչեւ հիմա վախենում է հրավառությունից: «Այդ ձայներն ինձ վախեցնում են, կարծես արկերի ձայնը լինի, որ դեռ չի ջնջվել իմ հիշողությունից»: Նարեի ծնողները զոհվել են արցախյան պատերազմում: Այժմ Երեւանում քաղաքագիտություն է սովորում, ապրում մորաքրոջ տանն ու Ղարաբաղ այցելում արձակուրդների ժամանակ: «Շատ դժվար է, գյուղերով շրջում եմ, բայց մարդիկ չեն ապրում: Ինչի՞ համար եք հեռացել ձեր երկրից, ձեր քաղաքից, տնից: Եկեք, այստեղ ապրեք, այս հողը մշակեք, որ մարդկանց արյան գնով է ազատագրվել: Դասախոսությունների ժամանակ անընդհատ ասում են, թե այլ ուղի չկա, շրջանները պետք է վերադարձնենք: Որպես ապագա քաղաքագետ ընկալում եմ, սակայն որպես ղարաբաղցի, ազատամարտիկների զավակ չեմ կարողանում դա հասկանալ», ասում է Նարեն:

Ղարաբաղում գրեթե բոլորն են դեմ տարածքների վերադարձին: «Ինչպե՞ս տանք, մեր հողն է, մեր ջուրը: Բա ինչի՞ համար էին կռվում», ասում է Սեւակը:

«Մենք ենք հաղթել պատերազմը, մեր հողերն ենք վերադարձրել: Էդ ո՞վ որոշեց, որ պետք է տարածք վերադարձնենք, ինչո՞ւ էդ նույն մարդիկ չէին գալիս ու մեր հալից հարցնում, երբ պատերազմ էր, տուն չունեինք, սոված էինք: Հիմա եկել են, թե տարածք տվեք», ասում է 20-ամյա Մուշեղը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստեփանակերտ-Երեւան

# Թուրք հեղինակը առաջարկում է արարողության համար բացել Աղթամարի եկեղեցին

*1-ին էջից*

Սակայն դրանով սահմանափակվելու են հայկական կողմին «հակաթուրքական» քաղաքականության մեջ մեղադրելու եւ վերջինի «անհաշտ» դիրքորոշումն աշխարհով մեկ մատնացույց անելու, ինչպես նաեւ Հայաստանին խնդրահարույց պետություն դարձնելու Թուրքիայի հնարավորությունները:

Ինչ վերաբերում է Հայաստանի հետ սահմանների բացմանը, ապա առանց դիվանագիտական հարաբերությունների հաստատման Թուրքիան հեշտությամբ կարող է փակել դրանք, եթե բացած լինի մինչեւ նախագահ Սերժ Սարգսյանի այցը: Այլ կերպ, առաջնայինը սահմանները չեն, այլ դիվանագիտական հարաբերությունները, ինչպես նաեւ միջազգային իրավունքի նորմերը, որոնք Հայաստանի նկատմամբ Թուրքիայի որդեգրած քաղաքականությամբ շարունակաբար ոտնահարվում են:

Թերեւս նախագահ Գյուլի հրավերի ընդունման եւ մերժման հետեւանքների տեսանկյունից պետք է գնահատել Թուրքիայի նախապատրաստությունը Հայաստանի հետ ֆուտբոլային պատասխան հանդիպմանը: Նախապատրաստության առումով հատկանշական է Ֆաքիհ Չեքիրգեի «Վանա լճի հրեշին գտել եմ» վերնագրով «Հյուրիեթի» հուլիսի 27-ի համարում հրապարակված հոդվածը, որի կրճատ տարբերակը ներկայացնում ենք ստորեւ.

«Երբ վերադառնում էինք Աղթամար կղզուց, որտեղ գտնվում է հայկական հնագույն եկեղեցին (Սբ Խաչ), Վանա լճի վրա լաստանավում պետնախարար Էգեմեն Բաղըշը, դիմելով Գեւաշի (Վանի արվարձաններից է) քաղաքապետ Նազմի Սեզերին` հարցրեց. «Ի՞նչ կլինի, եթե շարունակենք այս եկեղեցու վերանորոգումն ու արարողության համար նույնպես բացենք»: Սեզերը պատասխանեց. «Հոյակապ կլինի, մեծարգո նախարար: Անհրաժեշտ է նաեւ խաչը տեղադրել»: Հետո ես միջամտեցի. «Հակազդեցություն առաջ չի՞ բերի»: «Ինչո՞ւ պետք է բերի... Զբոսաշրջությունը թափ կստանա: Օրական տասնյակ ֆաքսեր եմ ստանում աշխարհի տարբեր ծայրերից, պահանջում են, որ Աղթամարի եկեղեցին բացվի նաեւ արարողության համար»:

Տախտակամածում գտնվող յուրաքանչյուր ոք հաստատեց Սեզերին: Բոլորը նույնն ասացին նաեւ Վանում` Վանի նահանգապետ Մունիր Կարալօղլուն, նահանգապետարանի մշակույթի վարչության պետը, քաղաքի ոստիկանները նույնպես, բնակչությունը` առավել եւս: Սակայն Աղթամարի եկեղեցին անբարեկարգ վիճակում է... թափթփված, պատերին քանդակված աննման ֆիգուրներն ու նախշերը` անտեր: Արգելել են խաչի տեղադրումը: Ծիսակատարությունների համար փակ է: Վանն աշխարհի ուրարտական մշակույթի նմուշներ պարունակող եզակի կենտրոնն է: Այստեղ կա ուղիղ 60 հազար արձանագրություն, որոնցից հազարը միայն, այն էլ անմխիթար վիճակում, ցուցադրվում է թանգարանում: Մնացածը պահեստում է փտում: Այսպիսով սպառվում է աշխարհում ուրարտական մշակույթի անսպառ աղբյուրը:

Հանկարծ Էգեմեն Բաղըշը ասում է. «Աթենքում մզկիթ էի տեսել, դուռը շղթայված: Սիրտս մղկտաց: Տեսնելով Աղթամարի եկեղեցին, նույն զգացումն ունեցա, սիրտս նորից մղկտաց»: Ցավալի է, չէ՞: Մինչդեռ Աղթամարը եւ բազմաթիվ այլ եկեղեցիներ այս երկրի հարստություններն են: Երբ Եվրոպայում մզկիթները բացում են նամազի համար, բա՞ն է պատահում: Այդ դեպքում ո՞րն է արգելելու իմաստը: Ինչ խայտառակություն է քրդերենն արգելելը, հայկական եկեղեցին փակելը, Հայաստանի սահմանը` նմանապես... Հույներն արդեն վաղն են... արգելել... թույլ չտալ: Մի՞թե տարիներ շարունակ սարսափի ֆիլմերում չենք ապրում: Շատ բարի, մենք ո՞ւր ենք հասնելու փշալարերի այս տրամաբանությամբ: Ես Վանա լճում տեսա, թե մի ամբողջ ազգ գազանաբար ինչպես է ոչնչացնում իր պատմությունն ու հարստությունը: Հենց այնտեղ էլ գտա Վանա լճի այն հրեշին, որին տարիներ շարունակ փնտրում էին:

Նախագահ Գյուլը կարեւոր գործընթացի սկիզբն է դրել... Հիմա Հայաստանի նախագահ Տեր-Պետրոսյանն (Սերժ Սարգսյանին նրա հետ է շփոթում) է գալու Թուրքիա... Առաջարկում եմ նախքան Տեր-Պետրոսյանի Թուրքիա գալը արարողության համար բացենք Աղթամար եկեղեցին եւ տեղադրենք նրա պատմական խաչը: Դրանով մի՞թե կծառայենք մեկ այլ Աստծո: Ոչ, դրանով մենք կծառայենք մարդկությանը, խաղաղությանը, խղճի ազատությանը: Չէ՞ որ օսմանյան սուլթանը, արձագանքելով դիմումին, թույլատրել է հոգեւոր ճեմարան բացել Աղթամարում, իսկ հոգեւորականները եկեղեցու պատում փորած արձանագրությամբ երախտագիտություն են հայտնել: Երեկ այդ արձանագրությունը ցույց տվեցին ինձ»:

Որքան էլ ուշացած լինի Ֆաքիհ Չեքիրգեի առաջարկը, այնուամենայնիվ, ողջունելի է, եթե իհարկե, անկեղծությամբ է արված, որովհետեւ նա հայանպաստ հոդվածներով առ այսօր աչքի չէր ընկել: Ինչ վերաբերում է նախագահ Սերժ Սարգսյանի անունը շփոթելուն, ապա դա ոչ միայն լրագրողական էթիկայի անթույլատրելի խախտում է, այլեւ դիվանագիտական քաղաքավարության կոպիտ ոտնահարում, այն առումով, որ «Հյուրիեթի» հեղինակ Չեքիրգեն պաշտոնաթող դեսպան է նաեւ:



# Սկաուտական բանակումը միջոց է սփյուռքահայ երիտասարդներին մայր հայրենիքին կապելու



**ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանի` 2007 թ. աշնանը Հայաստան կատարած հերթական այցը մի նոր կարեւոր ծրագրի իրագործման սկիզբ եղավ: Կենտրոնական վարչության ժողովի աջակցությամբ` կազմակերպվեց առաջին սկաուտական բանակում-ճամբարը Հայաստանում: Այդ նպատակով Լոռու մարզի Լերմոնտովո գյուղում ՀԲԸՄ-ն ձեռք բերեց սեփական հողատարածք:**

**«Ազգը» հրավեր էր ստացել ՀԲԸՄ-ից` ներկա գտնվելու «Անդրանիկ» սկաուտական ճամբարի առաջին հավաքի խարույկահանդեսին եւ փակման արարողությանը:**

**Տեղ հասնելուն պես նկատեցինք, որ տոնական տրամադրությունը, եռուզեռը ամենուր էր: «Ազգը» զրուցեց ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովի անդամ եւ Դամասկոսի ՀԵԸ գործադիր մարմնի ատենապետ Վազգեն Յակուբյանի հետ: «Ես ի սկզբանե այս բանակումի մեջ էի, բոլոր նախապատրաստական գործերին հետեւում էի, Գեւորգ Սանթուրյանի հետ մանրամասն ծրագրում էինք աշխատանքները: Այս բանակումը ՀԵԸ-ի համար սոսկ բանակում չէ, ՀԲԸՄ-ի մեծ նպատակն է հնարավորինս շատ սփյուռքահայ երիտասարդների, տարբեր ծրագրերով Հայաստան բերել եւ հայ-**



**րենիքին «կապել»: Բանակումը` միջոց է: Եվ անկախությունից հետո ՀԲԸՄ-ն տեսավ երկրի զարգացումը, բացի շատ բարեգործական ծրագրերի իրականացնելուց, նախաձեռնեց նաեւ Հայաստանում սփյուռքահայությանը նպաստող նոր ծրագրեր իրականացնել, որպեսզի այդ երիտասարդները մի օր օգտակար դառնան հայրենիքին ու ներդրումներ անեն հայ ազգին: Իսկ մեր նպատակին հասնելու համար սկաուտական շարժումը միջոց է»:**

**Հաջորդ զրուցակիցս` Թեհրանից 21-ամյա Լեռնիկ Իսայանը, արդեն երկրորդ տարին, որտանց մասնակցում է բանակումին: «Անցած տարվա անջնջելի տպավորություններից հետո ամիսներն էի հաշվում, թե երբ կրկին պիտի գամ այս բանակումին: Շատ հաճելի ու հետաքրքրական մթնոլորտ է տիրում այստեղ: Տարբեր երկրներից ժամանած սկաուտների հետ ծանոթացա, շփվեցի, ընկերացա: Դա պարզապես մի նոր էջ էր իմ կյանքում»:**

**Կարին Քալենթերյանը Լաթակիայից էր (Սիրիա), առաջին անգամն էր մայր հայրենիքում եւ հպարտությամբ ասում էր. «Բախտավոր եմ, որ կարողացա մասնակցել բանակումին ու վայելել այս չքնաղ բնությունն ու ընկերական ջերմ մթնոլորտը: Իսկ թե ի՞նչ տվեց այս բանակումը, ասեմ, կտրուկ փոխեց իմ պատկերացումը մայր հայրենիքի նկատմամբ: Լավ է մեկ անգամ գաս, քո աչքով տեսնես, քան 1000 անգամ կարդաս ու լսես»:**

**Երբ հնչեց «դրոշակի իջեցման» կոչնակը, 167 սկաուտները շարժեցին ճամբարի բացատի կենտրոնում տեղադրված մասնակից երկրների դրոշներով սյուների մոտ ու իջեցրին դրանք: Չնայած անձրեւոտ եղանակին, այնուհետեւ նրանք պատիվ տված մոտեցան այն խաչքարին, որը Լոռու մարզի Շահումյան գյուղի գյուղապետ Էդիկ Մանուկյանի նախաձեռնությամբ տեղադրվել էր ճամբարի մուտքի մոտ` ի հիշատակ Թեհրան-Երեւան ավիավթարից զոհվածների, որոնց թվում էին նաեւ ՀԲԸՄ սկաուտներ` Շողեր եւ Նաիրի Ստեփանյան քույրերը:**

**Հրաժեշտի միջոցառումը բացվեց ՀԲԸՄ հայաստանյան ներկայացուցչության փոխտնօրեն Հովիկ Յորդեկյանի ողջույնի ու մաղթանքի խոսքերով: Ավանդական խարույկահանդեսին ներկա էին նաեւ Ամերիկայից ժամանած բարեգործական խումբը, ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովի անդամ Վազգեն Յակուբյանը, Հայաստանի ներկայացուցչության տնօրեն Աշոտ Ղազարյանը, Թեհրանից ժամանած շատ հյուրեր: Այնուհետեւ ՀԲԸՄ եւ ՀԵԸ Լիբանանի վարիչ-տնօրեն, բանակավայրի ընդհանուր հրամանատար Գեւորգ Սանթուրյանը ներկայացրեց բանակումի մասնակից երկրներին ու նշեց այն բոլոր հանդիպումների մասին, որ այդ 14 օրերի ընթացքում սկաուտները կարողացել էին իրականացնել: «Չնայած Լոռու մարզը շատ անձրեւոտ է ու ցուրտ, բայց մեր սրտերը տաք են, իրարով կհպարտանանք եւ կտաքանանք», ասաց պարոն Սանթուրյանը: Այնուհետեւ խարույկահանդեսի հայտագրի ընթացքում ելույթ ունեցան տարբեր երկրների սկաուտները` ներկայացնելով երգ, պար, ասմունք, ուժային եւ ակրոբատիկ համարներ:**

**Հրաժեշտից առաջ «Ազգը» զրուցեց Գեւորգ Սանթուրյանի հետ. «Այս բանակումը Հայաստանում շատ կարեւոր դեր ունի սփյուռքի տարբեր ծայրերից երիտասարդներին մեկտեղելու ու նրանց մեջ սեր եւ նվիրվածություն սերմանելու, կապելու մայր հայրենիքի հետ, որը հետո մեծ դեր ու նշանակություն կունենա»:**

**Մի քանի օրից Լոռվա չքնաղ բնության, անտառների մեջ ծվարած ՀԲԸՄ սկաուտական բանակումի ճամբարը կընդունի սփյուռքահայերի երկրորդ հերթափոխին:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
Լոռու մարզից

AZG NEW 4.QXD 7/28/2009 9:28 PM Page 1



# «Ազգի» հարցազրույցը Լիբանանի խորհրդարանի նախկին պատգամավոր Հակոբ Գասարճյանի հետ

*1-ին էջից*

Բոլորը կկարծեին, որ տեղի ունենալիք ընտրություններում հայկական խորհրդարանական աթոռները պիտի գրավվին ՀՅԴ-ի կողմե: Դաշնակցությունը դարձյալ սկսավ խոսիլ «Հայկական բլոկի» մասին: Սակայն, ընտրություններում արդյունքով, Դաշնակցությունը միայն երկու երեսփոխան ունեցավ խորհրդարանին մեջ, մինչ ՌԱԿ-ը եւ ՍԴՀԿ-ն՝ չորս երեսփոխան:

Խոսելով «Հայկական բլոկ» հասկացության մասին, ինչպես քիչ առաջ կըսեի, մինչեւ 2000 թ. «Հայկական բլոկը» ՀՅԴ-ի կողմե կղեկավարվեր, թեեւ բլոկին մեջ մեկ դաշնակցական երեսփոխան կար, սակայն մյուսները ամբողջովին ենթակա էին կուսակցության Կենտրոնական կոմիտեին: Մեր հասկացողությամբ ատիկա «Հայկական բլոկ» ըլլալե ավելի ՀՅԴ-ի բլոկ էր, հայկական անունին տակ: 2000 թ. փոխված էր կացությունը, եւ խորհրդարանին մեջ դաշնակցական, ռամկավար, հնչակյան եւ չեզոք երեսփոխաններ կային արդեն: Նույնը կրկնված էր 2005-ին:

Կկարծվեր, որ 2009 թ. ընտրություններում նախկին կացության վերադարձ տեղի պիտի ունենա: Հոս հիշեցնեմ, որ Դոհայի համաձայնությամբ Բեյրութի երկրորդ ընտրաշրջանը նոր ձեւափոխություններու ենթարկված ըլլալով, որոշված էր, որ այդ ընտրաշրջանեն մեկ թեկնածու դաշնակցության կողմե եւ մեկ թեկնածու ալ հակառակորդ կողմե առաջադրվի: Այդպես ալ եղավ, եւ առանց ընտրության, երկու թեկնածուներ՝ դաշնակցական եւ հնչակյան, խորհրդարանին մեջ իրենց աթոռները ապահովեցին: Գալով Բեյրութի մյուս ընտրաշրջանի եւ Բեքաայի երեսփոխանական աթոռներուն, հոն ընտրապայքար եղավ, իսկայական աշխատանք տարվեցավ դուրսեն լիբանանահայեր բերելու եւ զիրենք ընտրություններուն մասնակից դարձնելու ուղղությամբ: Հակառակ բոլոր այդ աշխատանքներուն, Բեյրութի երեք հայ երեսփոխաններ եւ Բեքաայի հայ երեսփոխան ընտրվեցան հնչակյան եւ ռամկավար թեկնածուներ:

Նախքան ընտրությունները, միջկուսակցական ժողովներու ընթացքին, մենք աշխատանք տարած էինք «Հայկական բլոկի» վերաբերյալ համաձայնություն մը գոյացնելու ուղղությամբ, որով առաջարկած էինք, որ բլոկը գործե եւ միասնական հանդես գա միայն հայկական հարցերու, շահերու եւ լիբանանահայության իրավունքներու պարագային: Ասկե դուրս, իբրեւ հայկական ծագումով լիբանանցիներ, ամեն հայու ազատություն տրվի լիբանանյան քաղաքական կյանքին հանդեպ կողմնորոշվելու սա կամ նա ուղղությամբ: Այս առաջարկը դաշնակցության կողմե մերժված էր: Հակառակ անոր, որ դաշնակցությունը «8 մարտի» դաշինքին, իսկ մենք ալ «14 մարտի» ուժերուն մաս կկազմեինք, մենք առաջարկած էինք դուրս գալ այդ դաշինքներեն եւ կազմել չեզոք համախմբում մը, որ սակայն դարձյալ մերժված էր: Գալով «Հայկական բլոկին», իսկապես որ լիբանանցիներուն համար խորթ կթվի «Հայկական բլոկ» ըսվածը, քանի որ Լիբանանը, համայնքային դրությամբ երկիր ըլլալով հանդերձ, խորհրդարանին մեջ համայնքային ոչ մեկ բլոկ գոյություն ունի: Ես դեմ պիտի չըլլայի՝ եթե խորհրդարանի մեջ դաշնակցական կամ ռամկավար բլոկ գոյություն ունենար, բայց հայության անունը գործածել իբրեւ բլոկ, քիչ մը անընդունելի կթվի լիբանանցիներուն համար: Ճիշտ չէ նաեւ, որ բոլոր հայերը «մեկ կողովի մեջ» ըլլան: Լիբանանյան քաղաքականության մեջ գոյություն ունեցող զանազանությունը հայկական իրականության մեջ ալ գոյություն ունի եւ այդ զանազանությունը պետք է պահպանենք: Ամբողջ լիբանանահայության անունով խոսիլը կրնա վնասել լիբանանահայության: Մենք պետք չէ մոռնանք, որ մենք լիբանանցիներ ենք եւ մեր միակ տարբերությունը մեր հայկական ծագումն է: Մենք երկրին քաղաքացիներն ենք եւ կմասնակցինք Լիբանանի, այլ ոչ թե ուրիշ երկրի խորհրդարանական ընտրություններուն: Այս իմաստով շատ հստակ է մեր տեսակետը: Մենք մեր ազգային բոլոր սրբությունները պահպանելու, իրավունքները եւ շահերը պաշտպանելու համար պատրաստ ենք ամեն զոհողության: Մեր լեզուն, մեր եկեղեցին, մեր հայ դպրոցը եւ մեր ակումբները մեզի համար սրբություններ են, եւ իբրեւ հայեր եւ հայ պատասխանատուներ՝ երեսփոխաններ, նախարարներ, կամ կուսակցական ղեկավարներ, մեր սուրբ պարտականությունը եւ պարտավորությունն է պաշտպանել զանոնք: Ասիկա չի նշանակեր, որ մենք միակողմանի, իբր լիբանանահայեր, բոլորս պետք է ներկայանանք քաղաքական մեկ կողմի հետ միայն:

Լիբանանի քաղաքական նոր իրավիճակին թելադրանքով իսկ հայտնի է, որ լիբանանահայությունը երբեք պատրաստ եւ ի վիճակի չէ Լիբանանի ճակատագիրը առանձին որոշելու: Լիբանանը այսօր երկու մասի բաժնուած է եւ ջախջախիչ մեծամասնություն մը գոյություն չունի: Խորհրդարանի 128 երեսփոխաններեն եթե հանենք 6 հայ երեսփոխանները, մնացած 122 երեսփոխաններեն եթե մեկ կողմը ունենար 59, իսկ մյուս կողմը 63 կամ մօտավորապես այս թիվերու շուրջ, սա պիտի նշանակեր, որ լիբանանյան քաղաքական ճակատագիրը պիտի որոշեր հայկական բլոկը այս կամ այն կողմին մաս կազմելով: Ասիկա անկարելի պատասխանատվություն եւ ծանր բեռ մը պիտի ըլլար լիբանանահայության համար:

**- Վերջին խորհրդարանական ընտրությունների ընտրարշավի սկզբում ՌԱԿ-ի կողմից առաջադրվելուց հետո, վերջին պահին հրաժարվեցիք ու ՌԱԿ-ի թեկնածու առաջադրվեց անկուսակցական Ժան Հովասափյանը: Ի՞նչն էր պատճառը:**

- Նախ եւ առաջ կուզեմ հիշել եւ հիշեցնել բոլոր անոնց, որոնք հավանաբար մոռցած կրնան ըլլալ, թե վերջին երկու տարիներուն մեր ճակատի երեսփոխանները ինչպիսի դժվարություններու մեջ էին՝ ապահովական եւ նույնիսկ կյանքի վտանգի տակ: Շատ դժվարին օրեր անցուցած ենք, երկար ատեն նույնիսկ անձնական գրասենյակս եւ տունս չեմ կրցած այցելել: Այդ երկու տարիները այնպիսի տրամադրություն ստեղծած էին, որ երեսփոխանական աթոռ ունենալու հետաքրքրութենեն հրաժարեի: Այդ մթնոլորտին մեջ էի, երբ Դոհայի համաձայնությունը եղավ եւ արդեն այդ օրերուն իմ ընկերներուս եւ բարեկամներուս հայտարարած էի, որ նպատակ չունիմ առաջադրվելու: Սակայն ընտրապայքարը այնպես մը ընթացավ, որ կուսակցությունը դարձյալ առաջադրե իմ թեկնածությունը, որով հարկադրվեցա ընդունիլ զայն: Այս ընթացքին մեր կուսակցության վերին մարմինը՝ Կենտրոնական վարչությունը եւ մանավանդ անոր ատենապետ Մայք Խարապյանը իր այցելություններով ու տեսակցություններով հայտնի եւ անհայտ անձերու հետ, այնպիսի մթնոլորտ մը ստեղծեց, որ կարծես թե կուսակցության ներսը երկուություն մը գոյություն ունի եւ Կենտրոնական վարչությունը համաձայն չէ իմ թեկնածության:

ՌԱԿ Կենտրոնական վարչությունը, խախտելով այն ավանդույթը, որով Կենտրոնական վարչությունը Լիբանանի Շրջանային վարչության առաջադրած թեկնածուն է, որ կորդեգրեր Լիբանանի խորհրդարանական ընտրություններուն, հայտարարություն մը հրապարակեց, որով կոչ կըներ «միասնականության»: Այդ հայտարարությունը մեզի բավական դժվար կացության առջեւ դրավ: Լիբանանի Շրջանային վարչությունը մերժեց անշուշտ Կենտրոնական վարչության այս հայտարարությունը: Թեեւ մթնոլորտ պղտորող եւ սիրտ խառնող քայլեր էին ասոնք, սակայն առանց ուշադրություն դարձնելու անոնց, ես կրնայի շարունակել պայքարը, եւ ինչպես ՌԱԿ-ի առաջադրած թեկնածու Ժան Հովասափյանը, ես նույնպես կրնայի հաջողության հասնիլ: Թեկնածությունս հանելու հիմնական պատճառը Կենտրոնական վարչության ատենապետ Մայք Խարապյանի քայլերը չէին անշուշտ, այլ բազմաթիվ այլ պատճառներ եւս կային: Մեր կուսակցության ներքին հարցերը առավել պատճառ եղան, որ ես հրաժարիմ իմ թեկնածությունը ներկայացնելե: Ամեն պարագայի, կուսակցությունը իր աթոռը չկորսնցուց. հոգ չէ թե անկուսակցական է պարոն Հովասափյան, բայց ան շատ լավ կրնա ներկայացնել մեր կուսակցությունը: ՌԱԿ-ը խորհրդարանի մեջ ունեցավ իր աթոռը եւ իրեն շատ մոտ այլ երեսփոխան մը՝ Բեքաայի շրջանեն ընտրված Շանթ Չինչինյանը, որ ռամկավար ընտանիքի զավակ է: Մենք զմեզ բավարարված կզգանք ունենալով երկու երեսփոխաններ:

**- Կուսակցական ձեր ընդդիմախոսները ձեզ քննադատում են կուսակցության պաշտոնաթերթ «Զարթոնք» օրաթերթը շուրջ մեկ տարի փակելու, ինչպես նաեւ ՌԱԿ-ը Լիբանանում որպես տեղական կուսակցություն գրանցելու մեջ: Ի՞նչ կասեք այդ քննադատությունների մասին:**

- Նախ սկսիմ երկրորդով: 5-6 տարի առաջ, ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչության ատենապետ եղած ժամանակ, կուսակցության Կենտրոնական վարչության հետ խորհրդակցաբար, գաղափարը ունեցա գրանցել տալու կուսակցությունը Լիբանանի օրենքներով: Կենտրոնական վարչությունը եւ անոր ատենապետը համաձայն էին այդ գրանցումին, հակառակ անոր որ հիմա ուրիշ բան կըսեն այդ մասին: Գրանցումը կարեւոր էր մի քանի պատճառներով: Շատերը գիտեն, որ Լիբանանի մեջ գործող հայկական կուսակցությունները պաշտոնապես գրանցված չեն, անոնք կգործեն մշակութային միություններու անվան տակ: Մեր կուսակցությունները թեեւ օրենքով արտոնագրված չեն, բայց հանդուրժված եւ թույլատրված են: Այդ վիճակը որեւէ օր կրնա փոխվիլ, վտանգ մը, որ դամոկլյան սուրի պես ամեն օր կախված կմնար մեր գլխուն: Այդ իսկ պատճառով, ինչպես նաեւ այլ տեսակի առավելություններ ունենալու մտահոգությամբ, ինչպես եղավ «Զարթոնքի» պարագային, արձանագրել տվինք կուսակցությունը: Մեր կուսակցապատկան ունեցվածքը եւ բանկային հաշիվները տարիներ շարունակ անձերու անունով եղած են: Ֆինանսական եւ վարչական թափանցիկ վիճակ մը ունենալու համար էր, որ արձանագրել տվինք կուսակցությունը: Ընդդիմությունը միշտ առիթը պիտի օգտագործեր նման անտեղի եւ անհիմն քննադատություններ ընելու համար:

**- Դուք կո՞ղմ եք, որ դրական ընդդիմություն լինի նաեւ ՌԱԿ-ում:**

- Անշուշտ: Եթե հայկական մեկ կուսակցություն մը կա, որ անպայմանորեն պետք է դրական ընդդիմություն մը ունենա, ատիկա Ռամկավար ազատական կուսակցությունն է, քանի որ մեր գաղափարախոսությունը մեզի արդեն կպարտադրե ժողովրդավարությունը, իսկ ժողովրդավարությունը չի կրնար գոյություն ունենալ առանց ընդդիմության: Հետեւաբար, ընդդիմությունը մեզի համար միշտ ողջունելի եւ անհրաժեշտություն է, բայց այդ ընդդիմությունը դրական պետք է ըլլա: Վերջին տարիներուն մեր ընդդիմությունը եղած է պարզապես աթոռապաշտության, նախանձի եւ թռուցիկ բաժնող ընդդիմություն մը: Շատ ընկերներ իրենց նյութական կարողությունները կգործածեն այդ անձնական նպատակներուն հասնելու համար: Տարիներու ընթացքին մենք կրցանք դիմագրավել այդ բոլոր դժվարությունները: Հիմա ալ նոր դժվարություններ կան, նոր ընդդիմություն մը գոյություն ունի, որ ատենին մեծամասնություն կկազմեր: Մեծամասնություն- ընդդիմություն փոխած են իրենց դերերը: Ի վերջո, եթե վերլուծելու ըլլանք ՌԱԿ-ի վերջին տարիներու պատմությունը եւ խառնակչությունները, կտեսնենք, որ բոլորը անձնական փառասիրություններ են, գաղափարական, քաղաքական կամ պատկանելիության շուրջ լուրջ տարակարծություններ չկան:

Գալով «Զարթոնք» օրաթերթին, պետք է ըսեմ որ թերթը լուրջ դժվարություններ եւ նյութական մեծ բացեր ուներ: Կարգ մը ընկերներ դատական գործեր հարուցած էին թերթին դեմ: Թերթը կհրատարակվեր Թեքեյան մշակութային միության կողմե, որ օրենքով քաղաքական կազմակերպություն չըլլալով, քաղաքական օրգան մը հրատարակելու իրավունքը չուներ: Իրավական այս բոլոր դժվարությունները հաղթահարելու համար պետք եղավ թերթը դադրեցնել որոշ ժամանակ: Ասիկա առիթ եղավ, որ «Զարթոնքը» ամբողջովին մաքրվի: Այդ ամիսներուն ընթացքին, երբ արդեն կուսակցությունը եւ Թեքեյան մշակութային միությունը արձանագրված էին, շատ թափանցիկ կերպով նոր ընկերություն մը ստեղծեցինք, որուն տոկոսները միության եւ նոր արձանագրված կուսակցության կպատկանին եւ այդ ընկերությունն ալ, որ «Շիրակ պրես» կկոչվի, սեփականատերը եղավ «Զարթոնքին»: Երկար ժամանակ խլեց նաեւ թերթին տարիներ շարունակ կուտակված պարտքերուն, պետական տուրքերուն վճարումը եւ դատական քաշքշուկները: Արդեն նոր կարգավիճակով թերթը վերադարձուցինք մեր ընթերցողներուն:

**- Անկախ Լիբանանում խորհրդարանական ընտրությունների արդյունքներից, արդյոք համահայկական նպատակներն ու շահերը չե՞ն պարտադրում, որ ավանդական կուսակցությունները, այնուամենայնիվ, համագործակցության եզրեր գտնեն:**

- Անկասկած: Որեւէ կուսակցության պատկանող երեսփոխան, կուսակցական պատկանելիություն ունեցող կամ անկախ անհաս պետք է ազգային շահերը գերիվեր դասե կուսակցական շահերե: 2000 թ. առաջ այդպես էր, ասկե վերջ ալ այդպես եղավ: Հակառակ անոր, որ դաշնակցությունը ոչ դաշնակցական երեսփոխաններուն չէր ուզեր ճանչնալ, բայց եւ այնպես ամեն հարցի շուրջ, ուր հայ համայնքի շահերը կշոշափվին, միասին կգործակցինք: Միջկուսակցական ժողովները երբեք չեն դադրած եւ հույս ունիմ, որ կշարունակվին հետ այսու: Լիբանանահայ քաղաքական կուսակցությունները տակավին 1975 թվականեն սկսյալ համագործակցության շատ գեղեցիկ մթնոլորտ մը ստեղծած են: Լիբանանահայ կուսակցական թե անկուսակցական պատասխանատուներ նախանձախնդիր են, որ համագործակցության այդ մթնոլորտը տիրապետող մնա: Հայկական իրավունքներու պաշտպանությունը բոլորիս ճիշին պարտքն է: Հակառակ մեր սկզբունքային ծանոթ կեցվածքներուն Հայ եկեղեցվո երկփեղկումին հանդեպ, մենք համայնքային հարցերով սերտորեն կհամագործակցինք նաեւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հետ:

**- Գաղտնիք չէ, որ ՌԱԿ-ը վերջին տասնամյակներին ներքին ճգնաժամ է ապրում: Արդյոք Լիբանանի խորհրդարանական ընտրություններում կուսակցության հաջողությունն ու այլ գործոններ կարող են վերականգնել կուսակցության երբեմնի հզորությունն ու հմայքը:**

- Ես միշտ լավատես եմ: Մեր շարքերը նույն այս հավատքով պետք է գործեն եւ ունենան այն հաստատ համոզումը, որ կուսակցությունը անպայմանորեն պիտի գտնե իր միասնականությունը: Վերջին այս մի քանի ամիսներուն առիթը կար, որ կուսակցությունը միավորվի եւ միացյալ ձեւով ընդհանուր պատգամավորական ժողով մը գումարե: 2000 թ. ի վեր կուսակցությունը երեսփոխան ունեցած է Լիբանանի մեջ, սակայն միասնականություն չէ եղած: 2005 թ. երկփեղկումեն ի վեր, ես, որպես երեսփոխան եւ կուսակցական պատասխանատու, ճիգ չեմ խնայած կուսակցության միասնականությունը վերականգնելու համար: Այսօր, միասնականության ձեռք մեկնած եմ բոլոր այն անձերուն, որոնք ատենին ընդդիմադիրներ էին եւ կուսակցությունը Հայաստանի թե սփյուռքի մեջ երկուքի բաժնելով, անձամբ իմ դեմս ալ պայքարած էին: Ես պատրաստ եմ հանուն կուսակցության միասնականության անոնց հետ ալ համագործակցելու: Ինծի համար տակավին մութ կմնան կուսակցության միասնականության վերականգնման վերջին այս առիթեն չօգտվելու իրական պատճառները: Կարծես թե պահանջվածը այդ պիտի ըլլար, որ ՌԱԿ-ը միշտ բաժնված եւ պառակտված մնար: Ես համոզված եմ, որ միայն մութ կողմերուն նպատակը կրնա ըլլալ ատիկա:

**- Դուք լավատե՞ս եք այն բանում, որ այսքան դժվարություններից, կուսակցական ներքին պառակտումներից ու ցնցումներից հետո էլ, այնուամենայնիվ, ՌԱԿ-ը սփյուռքում վերականգնվելու, առողջանալու, հզորանալու ու ապագայում սփյուռքում գործելու ներուժ ունի:**

- Մենք՝ ռամկավարներս, պետք է հավատանք ապագային եւ աշխատինք, որ միությունը եւ միասնականությունը վերականգնի մեր միջեւ: Այդ միությունը պետք չէ ուշանա: Այսօրվա ղեկավարությունը դժբախտաբար չի ներկայացներ համասփյուռքյան մեր շարքերը, ատոր համար ալ երկար չի կրնար գոյատեւել: Այսպես չի կրնար շարունակել, վաստակավոր ղեկավարներ կան, փորձառու կուսակցականներ կան եւ երիտասարդություն մը կա, որ հեռու է իրենցմե: Մեր փառասիրությունները եւ աթոռամոլությունը մոռնալով, միասնաբար, ձեռք-ձեռքի տված, պետք է վերականգնենք Ռամկավար կուսակցությունը: Նույնիսկ եթե ՌԱԿ-ը գոյություն ունեցած չըլլար, հիմա՛ պետք է ստեղծվեր, որովհետեւ մենք միակ կուսակցությունն ենք, որ ազատականության եւ ժողովրդավարության կհավատանք:

Այսօր գոհունակությունս այն է, որ Հայաստանի մեջ իշխող գաղափարախոսությունը ժողովրդավարությունը եւ ազատականությունն են: Ասիկա մեզի համար մեծ դրամագլուխ մըն է, որպեսզի Հայաստանի թե սփյուռքի մեջ միանանք եւ սատար կանգնինք հայրենի այժմու իշխանություններուն, կամ Հայաստանի մեջ գալիք որեւէ իշխանության, որ ազատականությունը եւ ռամկավարությունը կորդեգրե իբրեւ գաղափարախոսություն:

AZG NEW 5.QXD 7/28/2009 9:28 PM Page 1



ՕՏԱՐ, ԱՄԱՅԻ ՃԱՄՓԵՔԻ ՎՐԱ

# Լեհաստանում էլ առանց փաստաթղթի հեռանկարներ չես ունենա

Այս տարվա ապրիլին՝ լեհական Զատիկի նախօրեին, Արթուր Նարգիզյանին ձերբակալեցին Լեհաստանի Բելոստոկ քաղաքում:

Քսանիննամյա Արթուրն իր կյանքի տասնվեց տարիները Լեհաստանում ապրել է առանց անձը հաստատող որեւէ փաստաթղթի: Սակայն առաջին անգամ էր սպառնում երկրից վտարվելու եւ լեհ կնոջից ու երեխաներից հեռանալու վտանգը:

Իսկ փաստաթուղթ չունենալու պատճառը տարիներ առաջվա միջադեպն էր, որ հոգոց հանելով հիշում է Արթուրը.

- Հորս դրամապանակը գողացան ավտոյի միջից, մեր բոլոր փաստաթղթերն էլ հետը: Տատս քրոջս ու ախպորս ծննդականները գտավ, ուղարկեց Հայաստանից, իմը չգտնվեց:

1993-ին էր, ինը տարեկան չկար, որ ընտանիքով տեղափոխվեցին Լեհաստան:

- Ինչքան հիշում եմ ու ինչ պատմել են, Հայաստանում լավ էինք ապրում, մամաս էլ էր աշխատում, պապաս էլ: Բայց տունը ծախեցինք, եկանք, որ մեծ ախպորս բանակ չտանեն:

Սկզբում ամեն ինչ լավ էր ընթանում, ապրում էին Հայաստանից բերած փողով, բայց շուտով ստիպված էին մտածել գումար վաստակելու մասին: Արդեն տասներեք տարեկանից Արթուրը դադարում է դպրոց գնալ ու աշխատանքի է անցնում շինարարությունում:



Տարիներ անց անձնագիր չունենալու պատճառով չի ստանում ամուսնության վկայական, թեեւ եկեղեցում է կատարվում պսակը, ապա՝ ձախողվում է հայրության ճանաչումը: Կնոջ ջանքերը՝ տարբեր ատյանների դիմելու, ամուսնությունն ու ամուսնու Լեհաստանում գտնվելը վավերացնելու փորձերը եւս երկար ժամանակ ձախողվում են:

Լեհաստանի Վիճակագրության կենտրոնական գրասենյակի՝ 2007-ին հրապարակած տվյալների համաձայն, Լեհաստանում ժամանակավոր կեցության թույլտվություն ստացածների թիվը 2005-06-ին ավելի քան կրկնակի գերազանցում է 2000-ի ցուցանիշը, համապատասխանաբար՝ 1418-ը 669-ի հարաբերականությամբ: Ըստ նույն աղբյուրի, աշխատանքի թույլտվություն ստացածների թիվն այդ ժամանակահատվածում չի հասնում երեք հարյուրի:

Սահակյանների ընտանիքը Լեհաստանում է արդեն քսան տարի: Զբաղվում են կահույքի մասերի, մանկական իրերի ու հագուստի արտահանմամբ դեպի Մոսկվա: Անահիտ Սահակյանն ամեն տարի դիմում է ժամանակավոր կեցության քարտը փոխելու համար: Հինգ տարին բավարար էր մշտական քարտ ստանալու համար, սակայն ընդհատումների պատճառով չի հաջողվել ստանալ այն.

- Վերջին տարին տվեցին երկու տարվա քարտ ու մերժեցին մշտականի համար դիմումս, հիմա նորից պիտի հինգ տարի սպասեմ, - ասում է Անահիտը, ում ամուսինն արդեն ստացել է մշտական բնակության թույլտվություն, իսկ երեք տղաները սովորում են Լեհաստանի տարբեր ուսումնական հաստատություններում.

- Մերը չէ սա, ժամանակավոր է, մի օր պիտի վերադառնանք մեր երկիր: Փոքր տղաս հաճախ է ասում՝ երթանք Երեւան:

Արթուր Նարգիզյանն էլ է երազում ընտանիքով Հայաստան գնալ, երբ լրանա իր 27 տարին.

- Ուզում եմ տղիս ցույց տամ Հայաստանը,- ասում է նա՝ ուրախությամբ ցույց տալով մեկ տարվա համար ստացած կեցության քարտը՝ իր միակ փաստաթուղթն ամբողջ գիտակից կյանքի ընթացքում, ինչը մեծ դժվարությամբ է ստացել: Երկուուկես ամիս ձերբակալված լինելուց հետո նրան են ներկայացրել յոթ օրում երկիրը լքելու փաստաթղթի ստորագրումը, որը մերժել է: Ապա կնոջը հաջողվել է գտնել ամուսնության իսկությունը փաստող արձանագրություն եկեղեցու մատյաններում, որին հաջորդել է նաեւ հայրության ճանաչումը, եւ վերջապես, հանուն երեխաների՝ Արթուրին թույլատրել են վերադառնալ ընտանիք:

**ԳԱՅԱՆԵ ԼԱԼԱՅԱՆ**
**Բելոստոկ, Լեհաստան**

ՎՐԱՑԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐՈՎ

# Վրաստանում ՄԱԿ-ն ու ԵԱՀԿ-ն չկան, ԵՄ-ը կլինի առայժմ էլի մեկ տարի

**Եվրոմիության անդամ 27 երկրների արտգործնախարարների նիստին երկուշաբթի Բրյուսելում որոշվել է երկարաձգել Վրաստանում ԵՄ դիտորդական առաքելության մանդատի ժամկետը եւս մեկ տարով՝ մինչեւ 2010-ի սեպտեմբերի 14-ը: Ըստ էության, Եվրոմիության առաքելությունը միակն է միջազգային կառույցների մանդատներից, որ դեռ գործում է Վրաստանում:**

**ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ առաքելությունների համար Վրաստանում չերկարաձգվեց մանդատի ժամկետը Ռուսաստանի կողմից երկու կառույցներում էլ վետոյի իրավունքի կիրառումից հետո: Խնդիրն այն էր, որ Ռուսաստանը դեմ էր արտահայտվում «փոփոխված իրողություններից», այսինքն՝ իր կողմից Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ճանաչումից հետո դիտորդական առաքելությունները շարունակել այնպես, կարծես ոչինչ չի եղել:**

**Այդպիսով, ստեղծվեց մի իրավիճակ, որ Եվրոմիությունը ներկա դրությամբ միակ կազմակերպությունն է, որի դիտորդները գտնվում են Վրաստանի տարածքում, նաեւ Աբխազիային եւ Հարավային Օսիային հարող տարածքներում:**

**Ափսոսանք եւ մտահոգություն հայտնելով Վրաստանում ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ առաքելությունների մանդատների ժամկետները չերկարաձգելու առնչությամբ՝ ԵՄ անդամ երկրների ԱԳ նախարարները Եմ առաքելությունը համարել են «կայունության հիմնական գործոն»՝ իրենց աջակցությունը հայտնելով Անդրկովկասում իրավիճակի առումով Ժնեւում տեղի ունեցող բանակցություններին՝ Վրաստանի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի մասնակցությամբ:**

**ԱԳ նախարարների հավաքում ԵՄ-ն ընդգծել է, թե իր առաքելության մանդատը տարածվում է Վրաստանի ողջ տարածքի վրա, կոչ անելով, որ «առաքելությանը տրամադրվի հնարավորություն առանց սահմանափակման մտնելու Աբխազիա եւ Հարավային Օսիա, ինչը մինչ օրս մերժում է ստանում»:**

**Հիշեցնենք, որ այս նույն պահանջն առկա էր ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ առաքելությունների մանդատը երկարաձգելու որոշման մեջ, ինչին էլ անհամաձայն մնաց Ռուսաստանը: Եվրոմիության առումով Ռուսաստանը որոշման կայացման փուլում ազդելու հնարավորություն չունի անմիջականորեն, բայց Եմ առաքելության պարագայում էլ Աբխազիա եւ Հարավային Օսիա ազատ մուտքի հարցը կմնա չլուծված:**

**Խնդիրն այն է, որ Եվրոմիության առաքելությունը Վրաստանում պաշտոնապես սկսել է աշխատել 2008-ի հոկտեմբերի 1-ից, օգոստոսյան պատերազմից հետո եւ ցայսօր որեւէ դիտորդ մուտք չի գործել Աբխազիա կամ Հարավային Օսիա: Առաքելության կազմում մոտ 200 չզինված դիտորդներ են ԵՄ 22 երկրներից:**

**Ա. Հ.**

# Թուրքիայում ձերբակալվել է 165 իսլամիստ

**Թուրքիայում ձերբակալվել են արգելված իսլամիստական խմբավորման՝ «Հիզբ ութ-Թահրիրի» («Ազատագրության կուսակցության») 165 անդամներ: Երկրի ոստիկանության տվյալները վկայակոչելով՝ այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Ոստիկանության հայտարարության մեջ ասվում է, որ իսլամիստները ձերբակալվել են շաբաթավերջին 81 գավառներից 21-ում միաժամանակ անցկացված գործողության ընթացքում: Գործողությանը մասնակցել է «ազգային անվտանգության ծառայությունը»:**

**Իսլամիստներից առգրավվել են հրազեն եւ քարոզչական նյութեր: Նրանք կոչ են անում ստեղծել միասնական իսլամական պետություն:**

**«Հիզբ ութ-Թահրիր» կամ «Հիզբ ութ-Թահրիր ալ-Իսլամի» կազմակերպությունը ստեղծվել է 1953-ին Երուսաղեմում, որպես եգիպտական «Մուսուլման եղբայրներ» շարժման բաժանմունք: Կազմակերպությունը հանդես է գալիս համաշխարհային խալիֆայության ստեղծման օգտին, գործում է գլխավորապես արաբական պետություններում եւ Արեւմուտքի երկրներում:**

# Սարկոզիին խորհուրդ տվեցին քիչ հոգնել եւ շատ ուտել

**Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի մերձավոր բարեկամները նրան խորհուրդ են տալիս նվազեցնել հյուծիչ մարզումների բեռնվածությունը եւ ավելի շատ ուտել: Այդ մասին հաղորդում է Լոնդոնի «Դեյլի թելեգրաֆ» թերթը:**



**Ենթադրվում է, որ Սարկոզիի կիրակնօրյա տկարությունը կապված է այն բանի հետ, որ նա խիստ սննդակարգի (դիետա) հարցում «չափն անցել էր» իր տիկնոջ՝ Կառլա Բրունիի ազդեցությամբ:**

**Հուլիսի 26-ին Վերսալի մոտակա զբոսայգում վազելու ժամանակ Սարկոզիի ինքնազգացողությունը կտրուկ վատացել էր, նրան «Վալ դը Գրաս» զինվորական հոսպիտալ էին տեղափոխել: Հաջորդ օրը նրան դուրս էին գրել հոսպիտալից եւ հանձնարարել էին նվազեցնել բեռնվածությունը: Բժիշկները նախագահի օրգանիզմում ի հայտ էին բերել նյարդային գերհոգնածություն: Սրտի հետ կապված խնդիրներ չեն հայտնաբերվել:**

**Նախագահի շրջապատի մարդկանց վկայակոչելով՝ «Դեյլի թելեգրաֆը» գրում է, որ վերջերս Սարկոզին ակտիվորեն պայքարում է սեփական ավելորդ քաշի դեմ, ուստի խիստ սննդակարգ է պահպանում: Մասնավորապես Կառլա Բրունին, որն անցյալում հայտնի թոփմոդել է եղել եւ ամուսնուց փոքր է 13 տարով, պահանջել էր, որ Սարկոզին չօգտագործի շոկոլադ, պանիրներ եւ զանազան թխվածքներ:**

**Սարկոզիի մտերիմ ընկեր, Ֆրանսիայի խորհրդարանի անդամ Պատրիկ Բալկանին հիշյալ թերթի թղթակցին հայտարարել է. «Նախագահը պարտավոր է ավելի շատ հոգալ իր առողջության մասին, ավելի քիչ աշխատել եւ ավելի շատ ուտել: Նա վախենում է գիրանալ, քանի որ միշտ գիրանալու հակում է ունեցել»:**

**Բալկանիի խոսքերով, Սարկոզին վերջերս բավական հյուծված տեսք ունի եւ պետք է բարելավի իր վիճակը:**

**Իր հերթին Սարկոզիի կենսագիր Կատրին Ռեյը նախագահին խորհուրդ է տվել համակերպվել, որ «ոչ ոք գերմարդ չէ»:**

# Դոկտ. Ավետիս Խաչատուրյանը արժանի էր Նոբելյան մրցանակին

***Պրինսթոնի (Նյու Ջերսի) հասարակությունը քիչ ուշադրություն դարձրեց դոկտ. Ավետիս Խաչատուրյանի թոշակի անցնելուն, գրում է Քլիֆսայդ պարկից (Նյու Ջերսի) Նուբար Դորյանը «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթում, որտեղից թարգմանաբար քաղում ենք հետեւյալ տեղեկությունները տաղանդավոր հայորդու մասին, որին, ըստ հոդվածի հեղինակի, պետք է շնորհվեր (թեկուզ մեկ ուրիշի հետ) Նոբելյան մրցանակ:***

Դեղաբուժության եւ ատամնաբուժության Հակենսակ համալսարանը 2008-ի հոկտեմբերին Խաչատուրյանի անունով ամբիոն էր հիմնել: Շնորհավորագրերը սկսել էին հասնել տարբեր երկրներից: Դրանցից մեկը՝ գրված էր հոկտեմբերի 28-ին եւ ստորագրված 1985-ին Նոբելյան մրցանակին միասնաբար արժանացած բժշկագիտության դոկտորներ Մայքլ Բրաունի եւ Ջոզեֆ Գոլդսթայնի կողմից: Երկուսն էլ՝ Հարավարեւմտյան բժշկագիտական կենտրոնի մոլեկուլյար գենետիկայի բաժնից: Նրանք մասնավորապես նշել էին. «Լիբանանում տարիներ առաջ համազիգոտային ընտանեկան հիպերխոլեստերոլեմիայի գենետիկայի բնագավառում կատարած ձեր ուսումնասիրությունները կարեւոր եւ առաջնային նշանակություն ունեցան մեզ համար այդ բնագավառում խորամուխ լինելու: Մենք ընդմիշտ երախտապարտ կմնանք ձեզ, որ ձեր եզրահանգումները ճիշտ էին եւ առանց դրանց ֆիբրոբլաստների կազմության թերությունները երբեք էլ ի հայտ չէին գա»: Նրա ուսումնասիրությունները որպես անաչառ եւ հուսալի աղբյուրներ մեջբերված են շատ գիտնականների աշխատանքներում: Նա մեծապես նպաստել է ընտանեկան հիպերխոլեստերոլեմիայի ախտորոշման եւ մեխանիզմների կարգավորման գործին: Դա բավական էր, որ նրան եւս 1985-ին շնորհվեր Նոբելյան մրցանակ:

Դոկտ. Ավետիս Խաչատուրյանն իր հետազոտական կենսագրությունը սկսել է Բեյրութում (Լիբանան), որտեղ 1957-ին Ամերիկյան համալսարանն ավարտելուց հետո հաճախել է երկու տարի Ջոսլին կլինիկան եւ Հարվարդի բժշկական համալսարանը՝ մասնագիտանալով կենսաքիմիայի եւ նյութափոխանակության բնագավառներում: Վերադառնալով Բեյրութ, նշանակվել է պրոֆեսորի օգնական 1959-1971 թվականը, որից հետո պաշտոնավարել որպես պրոֆեսոր: Հրավիրվել է դասախոսություններ կարդալու Մերձավոր Արեւելքի եւ Եվրոպայի բազմաթիվ երկրներում:

Չիկագոյի Հյուսիսարեւմտյան համալսարանի բժշկական ֆակուլտետի հրավերով տեղափոխվել է Մ. Նահանգներ: Համագումարների եւ սեմինարների մասնակցելու հրավերները բառացիորեն «ողողել» են նրան: Մեծ սիրով շարունակել է իր ուսումնասիրությունները եւ դասախոսությունները: Այնուհետեւ հրավիրվել է դասավանդելու Նյու Ջերսիի Ռոբերտ Վուդ Ջոնսոնի անվան բժշկական համալսարանը: Գրել է հարյուրավոր հոդվածներ, մենագրություններ եւ գրքերի առանձին գլուխներ: Նույնիսկ թոշակի անցնելուց հետո նա շարունակում է մնալ Շաքարախտավորների ամերիկյան ասոցիացիայի վարչության անդամ, ծառայել Սրտաբանության ամերիկյան ասոցիացիայի կազմում եւ լինել կենսաբանական քիմիայի եւ սննդի ու նյութափոխանակման բնագավառի պարբերականների խմբագրական կազմում:

Յուրաքանչյուր հայ, որտեղ էլ գտնվի, հպարտ կարող է զգալ նման տաղանդավոր եւ սկզբունքային հայրենակից ունենալու համար, եզրակացնում է իր հոդվածը Նուբար Դորյանը:

**Հ. Ծ.**

ԱԶԳ

## Մշակույթ

# Օպերային նոր ներկայացում

## Մոցարտի «Դոն Ժուան» օպերայի փոքր-ներկայացումը՝ երաժշտական հորջանք

Հայաստան կատարած այս այցիս ամենաուշագրավ տպավորությունը հուլիսի 25-ին Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում Մոցարտի «Դոն Ժուան» օպերայի բեմադրությունից էր, երբ որպես հրավիրյալ ներկա գտնվեցի գլխավոր փորձին եւ, իրապես, մեծագույն բավարարություն ու հուզում ապրեցի:

Իմ այս գրությունը Մոցարտի հայտնի ստեղծագործությանը պատմական կամ նկարագրական անդրադարձ չէ (այդ մասին ի մոտո ընդարձակ եւ հանգամանալի վերլուծումով հանդես կգամ սփյուռքահայ մամուլում): Սրանք ընդամենը տպավորություններ են երաժշտական գործի (որ շուտով հանրությանը կներկայացվի) բեմականացման, որակի, ի մասնավորի, կատարողական արվեստի:

Մշտապես ինձ սիրելի, այս ներկայացման մեջ եւս Մարինե Դեյմիջյան-դոնա Աննան հիացրեց իր լիրիկադրամատիկ, հոգեպարար, նրբաճաշակ ձայնով: Միայն վերջերս էր, որ երգչուհին հաջողությամբ համերգներով հանդես եկավ Շվեյցարիայում՝ իր արտիստիզմով եւ ձայնային տվյալներով տպավորելով տեղի հանդիսականին: Մարինեն Հայաստանի այն սակավ երգչուհիներից է, ով բարեբախտորեն ներքին հուզականությունն ու զգացմունքայնությունը կարողանում է համադրել կատարողական տեխնիկային, ինչը շատերին չի հաջողվում, եւ վերջինիս գերակայությամբ ստեղծագործությունը զրկվում է զգացականությունից, որեւէ երկի ամենաազդեցիկ եւ խորքային տարրից:

Լիանա Ղազարյան-դոնա Էլվիրա լիրիկադրամատիկ սոպրանոն իր մետաղաձայն երանգները հաճելիորեն պահպանեց ներկայացման ողջ ընթացքում: Նմանապես ինձ արդեն ծանոթ Արծվի Դեմիրճյան-Ցերլինան (սոպրանո-լիրիկ) բեմի վրա հաջողությամբ բացահայտվեց կերպարի տիպականությամբ:

Ներկայացման գլխավոր առավելությունը, որով նաեւ հուսադրող զգացումներ ծնվեցին, արական երիտասարդ ուժերի, հիմնականում նորավարտների եւ ուսանողների անդրանիկ այս ելույթի հաջողությունն էր, մանավանդ եթե նկատի առնենք մեծ նվագախմբի եւ վարպետ նվագավարի մասնակցության պարագան, երբ վստահաբար երիտասարդ արտիստները իրենց ներքին հուզումներն ու անհանգստությունները հաղթահարելու ճիգեր էին անում:

Արամ Հովհաննիսյան-դոն Ջովանի՝ միջին, հաճելի բարիտոն, մշակված ձայնով: Արտակ Կուզինյան-Լեպորելլո (Դոն Ժուանի բարի, խոնարհ ծառան) բարիտոն-բաս գոհացուցիչ ձայնով: Հիշատակելի է Հրանտ Պապյան (բաս)-Կոմանդորը: Համոզիչ կերպար էր Կարո Խաչատրյանի (տենոր) սիրահարը՝ նկատելի հուզմունքով իր բավական դժվար դերերգի մեջ: Առանձնակի դրվատանքի է արժանի հայլեպահայ տակավին երիտասարդ ուսանող (բամբ-բաս), ստենտորյան ձայնով Գեւորգ Մութաֆյան-Մազետտոն՝ հրաշալի դերակատարությամբ: Նրա բեմական շարժուն-խաղացկուն պահվածքը ստեղծեց մի այնպիսի կերպար, որն իր վրա էր պահում հանդիսականի ուշադրությունը, անգամ երբ ինքը, այսպես ասած, «կաղրից դուրս» էր: Արտիստիզմի, թեթեւ շարժումների ու արտահայտիչ դիմախաղերի շնորհիվ նա մշտապես մասնակից էր խաղի ընդհանուր ոգուն եւ հոգեբանությանը: Արտիստի նրա այս հատկանիշները խոստումնալից ապագայի նշաններ են ի ցույց հանում:

Երիտասարդ կատարողների անդրանիկ ելույթի այս հաջողությունը, իհարկե, հուսադրող է, սակայն նրանք առավել հղկվելու, կատարելագործվելու եւ առաջադիմության ճանապարհ ունեն դեռ անցնելիք:

Նվագավար Կարեն Դուրգարյանի մասին բազմաթիվ առիթներ ունեցել եմ արտահայտվելու, որպես միջազգային տարողության եւ մակարդակի երաժշտի:

Նշեմ, որ տեխնիկական որոշ աննշան հարցեր տակավին լուծելի կմնան, ինչպես բեմի լուսավորության խնդիրը: Նաեւ նկատեմ, որ երկրորդ արարին երիտասարդ նվագավար Հարություն Արզումանյանի ղեկավարությամբ նվագախմբի անհարկի ուժեղ նվագակցումը խափանեց բեմի խորքում մնացած երիտասարդ երգիչների երգեցողության հնչեղությունը: Այս վրիպումը Կարեն Դուրգարյանն արդեն իսկ նկատի առած էր եւ, բնականաբար, հետագայում կշտկվի: Իսկ բեմական ճաշակավոր հարդարանքը ստեղծել էր գեղարվեստական պայմանական միջավայր, որն ապահովում էր ներկայացման ամբողջական տպավորությունը, meteur en scene-ը (բեմադրիչը) հրավիրված էր Վրաստանից:

Ներկայացման տպավորությունը շատ դրական էր, հաջող կատարումներով եւ երիտասարդ, տաղանդավոր անունների հուսադրող գոյությամբ, որն էլ մեր օպերային թատրոնի ապագայի հիմնական երաշխիքն է:

Մշտապես հույս եմ փայփայել, որ Հայաստանը անցումային այս փուլերը (տնտեսական, ընկերային տագնապներից նյութապաշտականություն, շինարարակառուցողական մոլուցք եւ այլն) կհաղթահարի: Ի ցավ սրտի եմ ապրել այս ժամանակները, իբրեւ սփյուռքահայ ականատեսը լինելով արտերկրում ազգային մշակույթի, լեզվի նահանջի հուսահատության: Այսօր արդեն, կարծես այդ թանձր, կոշտ վարագույրը հետ է քաշվում, ի հայտ են գալիս արժեքների վերակենդանացման նշաններ եւ ավելի քան վստահ եմ՝ Հայաստանը հասնելու է գեղարվեստական ծաղկումի իր նոր շրջանին:

ԼԵՎՈՆ ՄՈՍԵՑՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# Հայկական ռոքի եւ մեր խնդիրները



32 ակումբում տեղի ունենալիք մենահամերգից առաջ լրագրողների հետ հանդիպել էր «Էմփիրեյ» խմբի մենակատար **Սարգիս Մանուկյանը**: Սովորական ասուլիսը, սակայն դարձավ ոչ միայն ռոքի խնդիրները ներկայացնելու, այլեւ սեփական մտքերը բարձրաձայնելու հնարավորություն:

## Հայաստանը յոլա՞ստան

Հարմարվողականությունը բերում է փակուղու եւ ստեղծագործական անկման: Հայաստանն այսօր կարելի է յոլաստան անվանել: Երաժշտության համար այսօր դաշտ չկա: Հայաստանում երաժիշտները կայանալու խնդիր ունեն: Սակայն ամենուր մարդիկ յոլա են գնում: Իսկ յոլայի մեղավորը հասարակությունն է:

Ակումբներում ելույթ չենք ունենում, քանի որ պարզ պայմաններ չկան: Գուցե նոր խմբերի համար ակումբները կարող են հարթակ լինել, բայց 15 տարվա պատմություն ունեցող մեր խմբի համար ակումբներն այսօր ելույթի համար անհրաժեշտ պայմանները չեն ապահովում: Հարմար չէ, երբ երգելու ժամանակ ձեռքդ կպչում է որեւէ մեկի գարեջրի շշին: Ակումբ կա, որ բեմ չունի: 32 ակումբում կայանալիք համերգն ակումբների հետ համագործակցության մեր առաջին փորձն է: Նրանք լավ տեխնիկա եւ պայմաններ են առաջարկել, իսկ մենք շատ բծախնդիր ենք: Ակումբներն իրականում անհրաժեշտ են, ամբողջ աշխարհում ակումբներն են, որ երաժիշտներին ստիպում են տեմպի մեջ մնալ:

## Մենք մեր ներսից հրաման ունեինք

Կան մարդիկ, ովքեր կենդանի երգելու համար հրամանագրերի կարիք ունեն: Երգիչ կա, որ տասը տարի երգելուց հետո, որոշել է գնալ վոկալի դասերի: Երբ 15 տարի առաջ ձեւավորվեց «Էմփիրեյ» խումբը, մենք որեւէ հրամանագիր չունեինք, մենք մեր ներսից հրաման ունեինք՝ չխաբել հանդիսատեսին: Հավաքական համերգներին չենք մասնակցում: Մեզ կոմերցիոն չեն համարում, մենք էլ չենք երգի մյուսի կամ մինուսի տակ: Նման արտահայտություններ, ի դեպ, միայն Հայաստանում կան: Կրթվածության եւ ճաշակի պակասն է համատարած ռաբիսության պատճառը:

## Հայերենը ռոքի լեզու չէ՞

Մինչեւ 2002 թվականը միայն անգլերենով էինք երգում, 2003 թվականից որոշեցինք, որ ռոքը պետք է հայերենով ներկայացնենք: Ոսկե միջինը Գիսանե Պալյանի տաղանդի շնորհիվ ձեւավորվեց: Բառային պրոբլեմ չունենք, փորձում ենք ճիշտ լուծումներ գտնել: Ռոքը Հայաստանում իր ծախսերը չի փակում, բայց մեր «դուխի» հաշվին ռոքը պահում ենք: Մենք դեմ ենք տրեխավոր արվեստին: Ազգային ինքնության հետ դա կապ չունի: «Մարո, յարո ջան» մենք չենք երգի: Երբ այդպիսի երգիչներից հարցնում ես՝ ինչ է ազգային ինքնությունը, պատասխան չեն ունենում՝ իրենց համար դրանք բառեր են, որոնց տակ թաքնվում են:

## Մեր հանդիսատեսը

Մեր հանդիսատեսը սիրում եւ լսում է լավ երաժշտություն: Նվիրված հանդիսատես է, ով ոչ միայն գիտի մեր երգի տեքստերը, այլեւ վերլուծել է: Մեր հանդիսատեսը մեր խմբի անդամն է:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# «Ասքեն Արմենյան հիմնադրամը»՝ Հույսի ձայն Հայաստան աշխարհում

Անտիկ շրջանի հույն փիլիսոփա, իդեալիզմի խոշորագույն ներկայացուցիչ Պլատոնի «Երաժշտությունը հոգի է տալիս տիեզերքին, թեւեր՝ մտքին, թռիչքներ՝ երեւակայությանը եւ ընդհանրապես կյանք՝ ամեն ինչին» խոսքերին հավատարիմ մնալով եւ նպատակ ունենալով հավերժացնելու ազնիվ եւ նվիրյալ կանադահայ կրթական ու հասարակական գործիչ ու բարերար, դոկտ. Ասքեն Արմենյանի քաղցր հիշատակը անցյալ տարվա դեկտեմբերին Կանադայում անձնուրաց հայրենասերի անժամանակ մահվանից անմիջապես հետո սկսել է գործել «Ասքեն Արմենյան հիմնադրամը», որի նպատակն է զարկ տալ երաժշտական կրթության առաջընթացին Հայաստանում:

Նպատակին հասնելու համար հիմնադրամը հնարավորություններ է ստեղծելու 4-16 տարեկան երեխաների համար զարգացնելու իրենց երաժշտական ունակությունները հատկապես երգչախմբային ծրագրերի միջոցով՝ Հայաստանի ամենատարբեր համայնքներում:

Հիմնադրամի տնօրենների վարչության կազմում են, ըստ այդ առթիվ տպագրված բրոշյուրի, դիրիժոր Ագնես Գրոսմանը (Տորոնտոյի ամառային երաժշտական փառատոնի հիմնադիր, լեգենդար «Vienne Boys» երգչախմբի եւ Մոնրեալի «Մետրոպոլիտեն» նվագախմբի երաժշտական մասի նախկին տնօրեն), դիրիժոր Րաֆֆի Արմենյանը (հանգուցյալի եղբայրը, Մոնրեալի երաժշտանոցի տնօրենը եւ Քիչեներ Ուոթերլու սիմֆոնիկ նվագախմբի երաժշտական մասի նախկին տնօրենը), Լեւոն Չիլինգարյանը (ջութակահար, երաժշտության ականավոր դասատու եւ Չիլինգարյան լարային քառյակի հիմնադիր) եւ Ալին Քութանը (սոպրանո, միջազգային ճանաչման արժանացած մեներգչուհի եւ «Մետրոպոլիտեն» օպերայի «Ազգային խորհրդի լսումներին» հաղթող արվեստագետ):

Հիմնադրամի երկու գլխավոր նպատակներն են նախ՝ ստեղծել օրինակելի մակարդակով մանկական երգչախմբեր Հայաստանի թերզարգացած շրջաններում (քանակը՝ կախված նյութական հնարավորություններից), եւ երկրորդ՝ ընտրել ու մասնագիտական կրթության հնարավորություն ընձեռել բացառիկ տաղանդով օժտված երեխաներին:

Առաջիկա երկու տարիների ընթացքում առաջին նպատակի իրականացման համար ընտրվելու են 5 շրջաններ: Հիմնադրամը այդ ծրագրերի համար աշխատանքի է վերցնելու լավագույն դասիարակ-մանկավարժներին եւ երաժշտագետներին: Հայաստանում վարչության երկու մշտական ներկայացուցիչներ վերահսկելու են աշխատանքները:

Կոտայքի շրջանում անցյալ ամսվանից՝ հունիսից արդեն սկսել է գործել երեխաների երգչախումբը (Sos Kinderdorf), որը բաժանված է երկու խմբի՝ մեկը 4-6 տարեկանների, իսկ մյուսը 7-16 տարեկանների համար: Յուրաքանչյուր խմբում ընդգրկված են մոտ 50 հոգի:

Հիմնադրամը նոր նյութական միջոցների կարիքն ունի իրականացնելու նման ծրագրեր նաեւ Լոռիում, Շիրակում, Վայոց ձորում եւ Արցախում:

Նման երգչախմբերի ստեղծման եւ պահպանման տարեկան ծախսը կազմում է մոտավորապես 7 հազար կանադական դոլար, որի մեջ մտնում է շաբաթական առնվազն երկու անգամ փորձեր եւ տարեկան առնվազն չորս համերգներ կազմակերպելը:

«Մեր նպատակն է մինչեւ 2010 թվի ամռանը հավաքել 70 հազար կանադական դոլար, որպեսզի կարողանանք 2 տարվա ընթացքում պահպանել 5 երգչախմբեր», նշված է բրոշյուրում: Հավելյալ տեղեկությունների համար խորհուրդ է տրվում այցելել infoaaf@yahoo.ca կայքը:

Հայաստանում ովքեր բախտավորություն են ունեցել աշխատակցելու դոկտ. Ասքեն Արմենյանի հետ եւ հետեւելու նրա բազում բարեգործություններին, հավատացած են, որ նորաստեղծ հիմնադրամը արժանավայել մակարդակով վառ կպահի Հայաստանին եւ երաժշտությանը անմնացորդ նվիրված եւ իրենցից անժամանակ բաժանված հայորդու հիշատակը:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Հեջինյանի «Ազատության գույները» Doric Hall-ում

Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 11-ը Doric Hall-ում (ԱՄՆ, Մասաչուսեթս նահանգ) կընթանա ամերիկաբնակ հայ նկարիչ Դանիել Վարուժան Հեջինյանի գործերի ցուցահանդեսը, որտեղ առաջին անգամ կցուցադրվի նրա գեղանկարը՝ նվիրված 2001 թվականին Նյու Յորքում տեղի ունեցած ահաբեկչության զոհերի հիշատակին: Ցուցահանդեսը, որ կոչվում է «Ազատության գույները», գեղարվեստական նախագիծ է՝ ֆինանսավորված կոնգրեսական Փիթեր Քութուջյանի կողմից:

Ն. Պ.

# Գյուստավ Ֆլոբերի ոգեշնչման աղբյուրը

Բրիտանացի գրականագետ Դեյվիդ Ուոլլերը հայտնաբերել է ֆրանսիացի հանճարեղ գրող Գյուստավ Ֆլոբերի՝ անգլուհի Գերտրուդ Թեննեթին ուղղված նամակները: Հայտնաբերված 24 նամակները, որ հիմնականում անտիպ են, տեղ են գտել Ուոլլերի «Հրաշալի տիկին Թեննեթը» գրքում, որի շնորհանդեսը կայացել է երեկ Լոնդոնում:



Գերտրուդ Թեննեթը պատկանում էր 19-րդ դարի լոնդոնյան արիստոկրատ ընտանիքներից մեկին, որ նամակագրական կապ էր պահպանում ժամանակի հայտնի մտածողների՝ Օսկար Ուայլդի, Հենրի Ջեյմսի, Վիկտոր Հյուգոյի հետ: Նամակների գոյության մասին Թեննեթի ընտանիքի անդամները տեղյակ չեն եղել: Ուոլլերն այն գտել է Թեննեթի գրադարանում: Փոքրիկ ծրարը վերնագրված էր «Հայտնի մարդկանց նամակներ: Չվառել»:

Գերտրուդ Թեններն ու Գուստավ Ֆլոբերը ծանոթացել են 1842-ին Տրուվիլ փոքրիկ քաղաքում: Այդ ժամանակ Ֆլոբերն ընդամենը 22 տարեկան էր: Հետագայում նրանց ընկերությունը շարունակվեց Փարիզում: 1844-ին Ֆլոբերը Գերտրուդին ուղարկված նամակներից մեկում գրում է, որ կցանկանար ժամանակն անցկացնել միայն նրա հետ: Ուոլլերը գրքում ենթադրում է, որ նրանց միջեւ սիրավեպ չի եղել:

«Անկասկած նրանց միջեւ առաջացել է ֆրանսերենից թարգմանած amitie amoureuse՝ կրքոտ ընկերություն, բայց ոչ սիրավեպ: Թեպետ վստահաբար Գերտրուդը ոգեշնչել է ֆրանսիացի հանճարեղ գրողին»:

Առժամանակյա դադարից հետո, Ֆլոբերն ու Գերտրուդը նամակագրական կապը վերահաստատում են 1857-ին: Գերտրուդն ամուսնացել էր, իսկ Ֆլոբերը դարձել էր ժամանակի հայտնի գրողներից մեկը. հրատարակել էր «Տիկին Բովարի» վեպը: Նամակներից մեկում Գերտրուդը նկատում է, որ այնքան էլ հիացած չէ վեպով եւ նրան է ուղարկում Ջորջ Էլիոթի «Ադամ Բիդ» գիրքը:

Նրանց վերջին հանդիպումը տեղի է ունեցել 1876-ին գրողի փարիզյան բնակարանում: Այդ ժամանակ Ֆլոբերն արդեն ավարտում էր «Հասարակ սիրտ» գիրքը: Ըստ Ուոլլերի, նրանք մի քանի ժամ զրուցել են, քննարկել տարբեր թեմաներ: Նրանց նամակագրական կապը շարունակվել է մինչեւ Ֆլոբերի մահը՝ 1880թ.:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW 7.QXD 7/28/2009 9:54 PM Page 1



# Լեւոն Արոնյանին լուրջ փորձություն է սպասում

Գերմանիայի Մայնց քաղաքում մեկնարկող շախմատային փառատոնն իր մեջ ընդգրկում է մի քանի մրցաշարեր, որոնց կմասնակցեն հայ շախմատիստները: Անկասկած, առաջին հերթին ուշադրության կենտրոնում կգտնվի հայ շախմատիստների առաջատար Լեւոն Արոնյանը: Նա կմասնակցի արագ շախմատի երկու մրցաշարի, որոնցում կվիճարկվեն աշխարհի չեմպիոնի տիտղոսները: Նա նախ՝ կփորձի պաշտպանել, այսպես կոչված, Ֆիշերի շախմատի կանոններով արագ շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Այդ մրցաշարի յուրահատկությունն այն է, որ խաղատախտակին խաղաքարերի նախնական դասավորությունը տարբերվում է սովորականից եւ համակարգիչն է պատահականորեն նշում դիրքը: Օրինակ, հնարավոր է ձին տեղ զբաղեցնի թագուհու տեղը, նավակը՝ արքայի եւ այլն:

Այդ մրցաշարում Արոնյանի մրցակիցները կլինեն Սլովակիայում բնակվող Սերգեյ Մովսիսյանը, ճապոնացի գրոսմայստեր Հիկարու



Նակամուրան եւ մոլդովացի Վիկտոր Բոլոգանը: Մրցաշարը կանցկացվի 2 շրջանով, յուրաքանչյուր օր մասնակիցները 3-ական պարտիա կանցկացնեն: Առաջին երկու տեղերը զբաղեցրած շախմատիստները 4 պարտիայից բաղկացած մրցախաղում կվիճարկեն աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Իսկ 3-4-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստները կվիճարկեն բրոնզե մեդալը: Ոչ-ոքի արդյունքի դեպքում կնշանակվի կայծակնային մրցախաղ:

Այդ մրցաշարի ավարտից հետո, որը կտեւի 3 օր, Արոնյանը հանդես կգա դասական արագ շախմատի աշխարհի առաջնությունում եւ կփորձի Վիշվանաթան Անանդից խլել ուժեղագույնի կոչումը: Բացի նրանից, մրցաշարին կմասնակցեն նաեւ գրոսմայստերներ Արկադի Նայդիչն ու Յան Նեպոմնյաչչին: Այն կանցկացվի նույն մրցակարգով:

Հայաստանցի մի խումբ շախմատիստներ, այդ թվում օլիմպիական չեմպիոններ Վլադիմիր Հակոբյանն ու Գաբրիել Սարգսյանը կմասնակցեն «Ordix Open-2009» մրցաշարին: Նրանց մրցակիցների թվում կլինեն գրոսմայստերներ Ալեքսանդր Գրիշչուկը, Էթիեն Բաքրոն, Գատա Կամսկին, Վուգար Ղասիմովը, Շահրիյար Մամեդյարովը, Հիկարու Նակամուրան, Դավիթ Նավարան, Վիորել Բոլոգանն ու այլ շախմատիստներ:

# Իբրահիմովիչ-Էտո' Օ գործարքը կայացավ

**Շվեդիայի հավաքականի եւ Միլանի «Ինտերի» հարձակվող Զլատան Իբրահիմովիչը հնգամյա պայմանագիր է կնքել «Բարսելոնի» հետ: Նրա տրանսֆերը գնահատվել է 66 մլն եվրո: Սակայն «Բարսելոնը» իտալացիներին կվճարի միայն 43,25 մլն եվրո, իսկ մնացած գումարի դիմաց «Ինտերին» է տրամադրել կամերունցի Սամուել Էտո' Օ-ին եւ բելառուսցի Ալեքսանդր Գլեբին:**

**Էտո' Օ-ն հնգամյա պայմանագիր է կնքել «Ինտերի» հետ: Նրա տրանսֆերը գնահատվել է 20 մլն եվրո: Նման ցածր գումարը պայմանավորված է այն բանով, որ կամերունցու պայմանագրի ժամկետի ավարտին ընդամենը մեկ տարի էր մնացել: Նշենք, որ նրա հարցում «Ինտերը» բնավ էլ չի տուժել, քանի որ 5 տարի առաջ «Մալյորկայից» գնել էր ընդամենը 4 մլն եվրոյով: Ինչ վերաբերում է Գլեբին, ապա նա հանդես է գալու վարձավճարով, ըստ որում մեկ տարվա աշխատավարձի 70 տո-**




**կոսը վճարելու է «Բարսելոնը»:**

**Զլատան Իբրահիմովիչը «Բարսելոնում» կխաղա մինչեւ 2014-ը: Եթե այդ ընթացքում որեւէ թիմ ցանկանա նրան գնել, պետք է 250 մլն եվրո վճարի: Ավելի քան 40 հազար հանդիսականներ էին հավաքվել «Նոու Կամպ» մարզադաշտում՝ ողջունելու Իբրահիմովիչին: «Բարսելոնում» նա հանդես կգա 9 համարի մարզաշապիկով, որով նախկինում խաղում էր Սամուել Էտո' Օ-ն:**

**«Ես չեմ եկել այստեղ փոխարինելու Սամուել Էտո' Օ-ին, քանի որ այլ ոճի ֆուտբոլիստ եմ: Պատրաստվում եմ առավելագույն ուժերս ներդնել եւ ապացուցել, որ չեք սխալվել իմ հարցում: Շնորհակալ եմ «Ինտերից» այն բանի համար, որ թույլատրեց ինձ տեղափոխվել «Բարսելոն»: Այս օրը մեծ իրադարձություն է ինձ համար», հայտարարել է Զլատան Իբրահիմովիչը:**

**«Ինտերի» նախագահ Մասիմո Մորատին գտնում է, որ գործարքը շահավետ էր կողմերի համար. «Չեմ հիշում նմանատիպ գործարք երկու հանրահայտ ակումբների միջեւ, որ շահավետ լիներ կողմերի համար: Իբրահիմովիչը տեղեկացրել էր, որ ցանկանում է այլ ակումբ տեղափոխվել: Վերջին ամիսներին նա մշտապես հայտարարում էր իր այդ ցանկության մասին: Եվ մենք չխոչընդոտեցինք նրան»:**

# Սպանվել է անվանի բռնցքամարտիկ Վերնոն Ֆորեստը

ԱՄՆ-ի Ատլանտա քաղաքում անհայտ չարագործները սպանել են պրոֆեսիոնալ հայտնի բռնցքամարտիկ, կիսամիջին եւ առաջին միջին քաշային կարգերում աշխարհի բազմակի չեմպիոն Վերնոն Ֆորեստին: Ողբերգական դեպքը տեղի է ունեցել բենզալցակայանում: Ուշ երեկոյան Ֆորեստն իր «Յագուար» ավտոմեքենայով կանգ էր առել բենզալցակայանում: Ըստ ոստիկանության ներկայացուցչի, երբ Ֆորեստը մեքենայի հետեւի անիվն էր կարգավորում, զենքի սպառնալիքի տակ անհայտ հանցագործը հափշտակել էր նրա դրամապանակը ու դիմել էր փախուստի: Ֆորեստը մեքենայից վերցնելով ատրճանակը, սկսել էր հետապնդել հանցագործին: Փոխհրաձգությունից հետո Ֆորեստը որոշել էր վերադառնալ մեքենայի մոտ: Վերադարձի պահին նրա թիկունքից կրակել են: Փամփուշտներից մեկը դիպել էր նրա գլխին, որի հետեւանքով բռնցքամարտիկը մահացել էր:

Վերնոն Ֆորեստը 38 տարեկան էր: Իր պրոֆեսիոնալ կարիերան նա սկսել էր 1992-ին՝ սիրողական բռնցքամարտում աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելուց հետո: Հետաքրքրական է, որ նա բռնցքամարտով սկսել էր զբաղվել 9 տարեկանից, իսկ ԱՄՆ-ի չեմպիոն էր դարձել 20 տարեկանում: Մեկ տարի անց նա արդեն իր հավասարը չուներ աշխարհում: Իսկ ահա օլիմպիական չեմպիոն դառնալ նրան չէր հաջողվել: Պատճառը մենամարտից առաջ բռնցքամարտիկի թունավորումն էր:

Պրոֆեսիոնալ բռնցքամարտում աշխարհի չեմպիոնի տիտղոսի նվաճումը դյուրին չէր: Միայն 2000-ին նա իրավունք ստացավ վիճարկելու չեմպիոնական գոտին Ռաուլ Ֆրանկի հետ, սակայն այդ մենամարտը հայտարարվեց չկայացած: Մեկ տարի անց Ֆորեստն, այնուամենայնիվ, հաղթեց Ֆրանկին եւ նվաճեց IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: 2002-ին նա դարձավ նաեւ WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոն՝ հաղթելով Շեյն Մոսլիին: Սակայն մեկ տարի անց Ռիկարդո Մայորգան խլեց նրանից չեմպիոնական գոտին:

Տեղափոխվելով ավելի ծանր քաշային կարգ, 2007-ին Ֆորեստը նվաճեց WBC-ի վարկածով առաջին միջին քաշի աշխարհի չեմպիոնի թափուր տիտղոսը: Պրոֆեսիոնալ ռինգում Ֆորեստը 45 մենամարտ է անցկացրել, որոնցից միայն 3-ում է պարտվել: Այս տարվա գարնանը նա վնասվածքի պատճառով հրաժեշտ էր տվել ռինգին:

# Նոր նամականիշ. Հայաստանը շախմատի համաշխարհային օլիմպիադայի կրկնակի չեմպիոն

**Այսօր ժամը 12:00-ին շախմատի տանը կմարվեն եւ շրջանառության մեջ կդրվեն «Հայաստանը շախմատի համաշխարհային օլիմպիադայի կրկնակի չեմպիոն» թեմայով թողարկված երկու նամականիշ: Նամականիշերի մարման պաշտոնական արարողությունը կիրականացնեն ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանը եւ «Հայփոստ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնակատար Արման Խաչատրյանը:**

**Միջոցառման ընթացքում ներկաներին կներկայացվի նաեւ «Հայփոստի» կողմից թողարկված ֆիլատելիստական գրքույկը՝ նվիրված Հայաստանի հավաքականի հաղթանակին:**

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# Պատվոգրեր Վախթանգ Դարչինյանին ու Սյուզի Քենտիկյանին

**Երեկ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց հանրահայտ հայ բռնցքամարտիկներ, բռնցքամարտի աշխարհի չեմպիոններ Սյուզի Քենտիկյանին եւ Վախթանգ Դարչինյանին: Նախարարը ողջունեց հայ մարզիկներին, հետաքրքրվեց նրանց առաջիկա ծրագրերով եւ գալիք մենամարտերով: Հանդիպման ավարտին նախարարը մարզիկներին հրավիրեց Երեւանի Վազգեն Ա Վեհափառի անվան 168 միջնակարգ դպրոց, ուր «Հայրենագիտություն» դասընթացի էին մասնակցում «Արի տուն» ծրագրով Հայաստան ժամանած սփյուռքահայ երիտասարդները:**



**Դպրոցի տնօրեն Սոնա Գալստյանի ողջույնի խոսքից Հրանուշ Հակոբյանը սփյուռքահայ պատանիներին ու աղջիկներին մաղթեց, որ նրանք Վախթանգի ու Սյուզիի նման միշտ հաղթանակներ տանեն կյանքում: «Վախթանգը եւ Սյուզին հաղթող տղա եւ աղջիկ են: Եվ ուզում ենք, որպեսզի նրանք կյանքում ամեն ինչում էլ հաղթող լինեն: Նրանք այդ ամենին հասել են իրենց առջեւ նպատակ դնելով, իրենց ամենօրյա քրտնաջան աշխատանքով»: Նախարարը կոչ արեց, որ ամեն մի հայ Վախթանգի նման Հայաստանի դրոշի պատիվը բարձր պահի: Այնուհետեւ Հրանուշ Հակոբյանը սփյուռքի նախարարության պատվոգրերը հանձնեց Սյուզի Քենտիկյանին եւ Վախթանգ Դարչինյանին՝ միջազգային ասպարեզում հայկական սպորտի եւ հայի անունը բարձր պահելու համար:**

**Դպրոցի աշակերտությունն ու «Արի տուն» ծրագրի մասնակից սփյուռքահայ դպրոցականները մեծ խանդավառությամբ ընդունեցին Վախթանգի շնորհակալական խոսքը եւ ամեն օր քրտնաջան աշխատելու հորդորները: Նրանք իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին հայազգի չեմպիոններին: Հարցուպատասխանից մասնավորապես պարզվեց, որ Վիկի փոքրիկ տղան՝ Ռուբենը դեռեւս երկու տարեկան է, հայերեն չի խոսում, իսկ ինչ վերաբերում է մարզական ապագային, ապա ռեւանշ մենամարտ հնարավոր է տեղի ունենա հաջորդ տարի: Սյուզիին ուղղված հարցերն ավելի անձնական էին: Մասնավորապես նա նշեց, որ բռնցքամարտով սկսել է զբաղվել 12 տարեկանից եւ առայժմ չի պատրաստվում ամուսնանալ:**

**Հրաժեշտից առաջ սփյուռքահայ երիտասարդները հիշատակի համար լուսանկարվեցին ու խոստացան մշտապես կապ պահպանել անվանի չեմպիոնների հետ: Վերջիններս էլ խոստացան, որ այսուհետեւ Հայաստան ավելի հաճախ կայցելեն, քանզի նման այցերը նրանց կրկնակի ուժ ու լիցք են տալիս:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Մեծահասակներն էլ իրենց լավ դրսեւորեցին

**Հայաստանի հունահռոմեական ոճի մեծահասակների հավաքականը հաջող մրցելույթներ ունեցավ Մարիուպոլում ավարտված «Ազովմաշի գավաթի» խաղարկությունում: Մեր մարզիկները նվաճեցին 3 ոսկե, 1 արծաթե եւ 2 բրոնզե մեդալ:**

**Հաղթողներից մեկը հավաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանի որդին էր՝ Արսենը, որը ոսկե մեդալի արժանացավ մինչեւ 74 կգ քաշայինների մրցավեճում: Եվրոպայի այս տարվա չեմպիոնը եզրափակիչում հաղթեց Իրանի ներկայացուցիչ Ալիզադեհին:**

**Մեր հավաքականին 2-րդ ոսկե մեդալը պարգեւեց Սասուն Ղամբարյանը: Մինչեւ 66 կգ քաշային կարգում նա մտավ եզրափակիչ ու կրկին հանդիպեց իրանցի ըմբիշի հետ: Ալի Մոհամադիի հետ գոտեմարտում Սասունը հաղթեց եւ կանգնեց պատվո պատվանդանի վերին աստիճանին: Իսկ ահա 84 կգ քաշային կարգում եզրափակիչում հանդիպեցին հայ ըմբիշները՝ Արթուր Շահինյանն ու Տիգրան Սահակյանը: Հաջողությունն ուղեկցեց Արթուրին: Բրոնզե մրցանակակիրներ դարձան Ռոման Ամոյանը (55 կգ) եւ Դենիս Ֆորովը (84 կգ):**

# Միրումյանը 50 տոկոսանոց արդյունք ունի

**Չեխիայի Պարդուբիցե քաղաքում ընթացող շախմատի մրցաշարին մասնակցում է այդ երկրի դրոշի ներքո հանդես եկող Վիգեն Միրումյանը: Մրցաշարում հանդես են գալիս 294 շախմատիստներ, որոնք կանցկացնեն 9 տուր: 4 տուրից հետո Միրումյանն ունի 2 միավոր: Նա հաղթանակով մեկնարկեց՝ պարտության մատնելով Մայերին: Այնուհետեւ հայ շախմատիստը երկու անընդմեջ պարտություն կրեց Կարտանից ու Բերզինայից, որից հետո կրկին վայելեց հաղթանակի քաղցրությունը Վեդրիկասի հետ պարտիայում:**

# «Ստյաուայի» ֆուտբոլիստները գիշերեցին փողոցում

Հունգարական «Ույպեշտի» հետ ֆուտբոլի Եվրոպայի լիգայի պատասխան խաղից առաջ ռումինական «Ստյաուայի» ֆուտբոլիստները ստիպված էին գիշերն անցկացնել փողոցում: Նրանք իջեւանել էին «Սոֆիթել» հյուրանոցում: Տեղական ժամանակով 0.45-ին հյուրանոցում բնակվողները ստիպված էին շտապ կարգով լքել իրենց համարները: Պատճառն այն էր, որ ոստիկանությունն ահազանգ էր ստացել, թե իբր հյուրանոցում պայթուցիկ սարք է տեղադրված: Դրա որոնումները տեւեցին մինչեւ ժամը 4-ը, սակայն այդպես էլ ոչինչ չգտնվեց:

Վերջին շրջանում նման ահազանգերը Բուդապեշտում հաճախակի են, որոնց պատճառով ստիպված են եղել շտապ կարգով էվակուացնել առեւտրի կենտրոնի եւ գյուղնախարարության աշխատակիցներին:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW 8.QXD 7/28/2009 9:54 PM Page 1



# «Ազատություն\Ազատ Եվրոպայի» դեմ դատական հայցերը՝ փորձաքար Օբամայի վարչակազմի համար

Իրազեկ աղբյուրները հաղորդում են, որ մոտակա շաբաթների ընթացքում ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Սենատի հաստատմանը կհանձնի Հեռարձակող կառավարիչների խորհրդի (BBG) անդամների թեկնածությունները: Սա այն մարմինն է, որին ենթարկվում են օտար երկրների համար հեռարձակվող ամերիկյան ոչ ռազմական ռադիոկայանները, մասնավորապես մեզանում քաջածանոթ «Ամերիկայի ձայնն» ու «Ազատություն» ռադիոկայանը: Սա նաեւ այն մարմինն է, որը նշանակումից անմիջապես հետո Չեխիայի Հանրապետության հետ կանգնելու է Ստրասբուրգի մարդու իրավունքների դատարանի առջեւ՝ «Ազատություն\Ազատ Եվրոպա» ռադիոկայանի ոչ ամերիկացի եւ ոչ չեխ աշխատակիցներին (հիմնականում լրագրողներ) միտումնաբար ու խարդախությամբ աշխատանքային իրավունքներից զրկելու եւ իրավական վակուումում պահելու մեղադրանքով:

Չեխիայի Հանրապետությունը ստրասբուրգյան դատարանում հայտնվում է իբրեւ «Ազատություն\Ազատ Եվրոպա» ռադիոկայանին հյուրընկալած պետություն, որն ի վիճակի չի եղել իր երկրի տարածքում պաշտպանել օտարերկրացի աշխատողների տարրական իրավունքները: Այժմ անգամ Գուանտանամոյում ավելի քիչ իրավազուրկ մարդ է պահվում, քան չպաշտպանված լրագրողներ են աշխատում իրավական Գուանտանամո դարձած ամերիկյան այս հարգված ռադիոկայանում: Տարբերություն անշուշտ կա, Գուանտանամոյի ազատազրկվածներին չեն խոստացել իրավական պաշտպանություն ամերիկյան օրենքներով, մինչդեռ «Ազատություն\Ազատ Եվրոպա» ռադիոկայանի Պրահայի կենտրոնակայանում աշխատանքի հրավիրվածներին աշխատանքային պայմանագրերով խոստացվել է պաշտպանություն ամերիկյան համապատասխան օրենքներով: Զավեշտն այն է, սակայն, որ այդ օրենքները ԱՄՆ սահմաններից դուրս ամերիկյան ընկերություններում աշխատող ոչ ամերիկացիների վրա չեն տարածվում: Այս խարդախությունը պարզել են ռադիոկայանից կամայականորեն հեռացված ու դատական գործեր հարուցած Խորվաթիայի քաղաքացի Սնեժանա Պելիվանն ու Հայաստանի քաղաքացի Աննա Կարապետյանը: Նրանցից առաջ կամայականորեն հեռացված տասնյակ այլք գերադասել են վերցնել լռության դիմաց առատորեն տրվող պարգեւագումարն ու հեռանալ:

Այժմ Հեռարձակող կառավարիչների նոր նշանակվելիք խորհուրդը (BBG) ստիպված է լինելու բացատրություն տալ, թե ինչու է միտումնաբար իրավական վակուում ստեղծել մարդու իրավունքները պաշտպանելու եւ ժողովրդավարական արժեքներ տարածելու առաքելությամբ ամերիկյան պետական բյուջեից մեծ գումարներ ստացող «Ազատություն\Ազատ Եվրոպա» ռադիոկայանի աշխատակիցների համար: Հայցը Ստրասբուրգի մարդու իրավունքների դատարան ներկայացվելու է մինչեւ սեպտեմբերի 16-ը: Նշենք, որ ի պաշտոնե Հեռարձակող կառավարիչների խորհրդի (BBG) անդամ է նաեւ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը: Պատմության մեջ առաջին անգամ է ամերիկյան որեւէ կազմակերպություն կանգնելու մարդու իրավունքների դատարանի առջեւ, այն էլ մի կազմակերպություն, որ տասնամյակներ առաջ հիմնադրվել է հենց մարդու իրավունքները պաշտպանելու համար:

Ամերիկյան հեղինակավոր Understanding Government («Հասկանալով կառավարությանը») կայքէջը հայտնում է, որ Խորվաթիան ու Հայաստանը դատական այս վիճաբանությունում պաշտպանելու են իրենց քաղաքացիներին: Այնպես որ դատական այս հայցերն «Ազատություն\Ազատ Եվրոպա» ռադիոկայանի դեմ յուրօրինակ լակմուսի թուղթ են ու փորձաքար՝ Բարաք Օբամայի վարչակազմի ու հայտարարված փոփոխությունների համար:

ՀՐԱՆՏ ՂԱՐԲԻՆՅԱՆ

**Խմբագրության կողմից-** *Այս խնդրին մեր թերթը քանիցս անդրադարձել է: Առավել ընդարձակ անդրադարձը կարդացեք **«Ազգի»** այսօրվա ինտերնետային անգլերեն ու ռուսերեն կայքէջերում:*

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ՝ ՀՀ ԿԲ կանխիկ դրամով գործառնությունների վարչության Դրամանիշերի վերահաշվարկի եւ տեսակավորման բաժնի «սարքավորումների սպասարկող ինժեներ» թափուր աշխատատեղի համալրման համար:*

**Աշխատանքի նպատակն է.** ՀՀ կենտրոնական բանկի ԿԴԳ վարչության դրամանիշերի վերահաշվարկի եւ տեսակավորման բաժնի սարքավորումների սպասարկում (վերանորոգում, պրոֆիլակտիկա, դիագնոստիկա):

**Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.**

Բաժնում առկա դրամանիշերի վերահաշվարկի եւ տեսակավորման, ոչնչացման տեխնիկական սարքավորումների պրոֆիլակտիկայի իրականացում:

Դրամանիշերի վերահաշվարկի եւ տեսակավորման, ոչնչացման տեխնիկական սարքավորումների ծրագրային դիագնոստիկայի իրականացում, ծրագրային եւ փաստացի դիագնոստիկայով բացահայտված անսարքությունների պատճառների վերլուծություն եւ վերացում:

Դրամանիշերի վերահաշվարկի եւ տեսակավորման, ոչնչացման սարքավորումների անխափան աշխատանքի համար անհրաժեշտ պահեստամասերի ցուցակի կազմում եւ ներկայացում ղեկավարությանը ՝ ըստ անհրաժեշտության:

**Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը**

Բարձրագույն տեխնիկական/բնագիտական կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում:

Միջնակարգ տեխնիկական կրթության պարագայում՝ 10 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ էլեկտրոնիկա (խորացված), համակարգչային գիտելիքներ (միջանկյալ), մեխանիկա (միջանկյալ):

Լեզուների իմացություն հայերենի, ռուսերենի, անգլերենի ազատ տիրապետում:

Անհրաժեշտ հմտություններ՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office):

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ 2009թ. օգոստոսի 10-ը

**Աշխատավարձը՝** 220 600 դրամ

**Պահանջվող փաստաթղթերը.**

Դիմումի ձեւ (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում- www.cba.am , «Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում):

Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով:

Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում ( www.cba.am ) կամ տրվում է Կենտրոնական բանկում:

Պարզաբանումների համար կարող եք զանգահարել ՝ 59-26-34 եւ 26-22 (ներքին):

***Հասարակայնության հետ կապերի ծառայություն***

## Մրցույթի հրավեր 095/09/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ Սպիտակ քաղաքի «Կենտրոն-1» թաղամասի Ալեք Մանուկյան փող. թիվ 1-10 եւ Թորոսյան փ. թիվ 11-16 բնակելի շենքերի կենտրոնական ջեռուցման համակարգերի վերակառուցման աշխատանքներ իրականացնելու համար:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ օգոստոսի 14, ժամը 17:00:

## Letter of Invitation 095/09/PRO

United Nations Development Programme (UNDP) Armenia announces a competition for procurement of for Reconstruction works of centralized heating systems in multi-apartment residential buildings ## 1 to 10 on Alek Manukyan Street and ## 11 to 16 on Torosyan Street, Kentron-1 district, Spitak town.

Detailed Request for Quotation can be obtained from UNDP Armenia website at **http://www.undp.am/?page=TendersAnnouncements** or from UNDP Armenia Procurement Unit, 14 Petros Adamyan St., Yerevan, from 14:00 to 16:00. Tel: 56 60 73 +126 Grigor Akhnoyan.

Offers must be submitted to the UN security guards office at 14 Petros Adamyan St., Yerevan.

Deadline: 14 August 2009, 17:00 local time.

## Մրցույթի հրավեր 096/09/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ Իրավական ակտերի մշակում՝ աջակցելու մոնիտորինգի եւ տեղեկատվության համակարգի օպտիմալացման նպատակով ինստիտուցիոնալ եւ իրավական ներուժի զարգացում Հայաստանում՝ գլոբալ բնապահպանական կառավարման համար:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ օգոստոսի 14, ժամը 17:00:

## Letter of Invitation 096/09/PRO

United Nations Development Programme (UNDP) Armenia announces a competition for procurement of Development of legal acts for supporting development of Institutional and Legal Capacity to Optimize Information and Monitoring System for Global Environmental Management in Armenia services. Detailed Request for Quotation can be obtained from UNDP Armenia website at **http://www.undp.am/?page=TendersAnnouncements** or from UNDP Armenia Procurement Unit, 14 Petros Adamyan St., Yerevan, from 14:00 to 16:00. Tel: 56 60 73 +126 Grigor Akhnoyan.

Offers must be submitted to the UN security guards office at 14 Petros Adamyan St., Yerevan.

Deadline: 14 August 2009, 17:00 local time.

## Մրցույթի հրավեր 094/09/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ Ապարան քաղաքի Բաղրամյան փող. թիվ 46 բազմաբնակարան շենքի (2 մասնաշենք 46ա, 46բ) կենտրոնական ջեռուցման համակարգերի գործարկման աշխատանքների կատարման համար:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ օգոստոսի 13, ժամը 17:00:

## Letter of Invitation 094/09/PRO

United Nations Development Programme (UNDP) Armenia announces a competition for procurement of Put in operation centralized heating systems in multi-apartment residential buildings # 46 on Baghramyan Street (two buildings: 46a and 46b), Aparan town works.

Detailed Request for Quotation can be obtained from UNDP Armenia website at **http://www.undp.am/?page=TendersAnnouncements** or from UNDP Armenia Procurement Unit, 14 Petros Adamyan St., Yerevan, from 14:00 to 16:00. Tel: 56 60 73 +126 Grigor Akhnoyan.

Offers must be submitted to the UN security guards office at 14 Petros Adamyan St., Yerevan.

Deadline: 13 August 2009, 17:00 local time.

## ՊԱՀՊԱՆԵԼ ԳԱԶԻ ՍԱՐՔԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

«Հայաստանի հրշեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միության խորհրդի կողմից, նպատակահարմարության տեսանկյունից հայտնում ենք՝ գազի սարքավորումների օգտագործման ժամանակ ծխատարի վատ քարշի պատճառով կարող է առաջանալ թերայրում: Թերայրման հետեւանքով առաջանում է ածխածնի օքսիդ (շմոլ գազ), որն ուժեղ թունավոր գազ է, եւ որի աննշան քանակության առկայությունը շինությունում կարող է թունավորման պատճառ դառնալ: Խորհուրդ է տրվում նման դեպքում անմիջապես մաքրել ծխնելույզները եւ նոր միայն օգտագործել գազասարքերը:

Ծխաօդատար ուղիների մաքրման, վերանորոգման աշխատանքներ կատարելու համար կարող եք զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 443-432:

Հոդվածն ընթերցելիս այն ընկալել որպես նպատակահարմարության տեսանկյուն:

***«ՀՀԱՄԾ» ԻԱՄ ԽՈՐՀՈՒՐԴ***

***ՈՉ պաշտոնական հրապարակում***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 28.07.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: